

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՀԱՊԿ-ի Ուշացած Քայլը

Հալածակալի Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունը հիմնադրված է 1992 թուականին նախկին՝ Խորհրդային Միության վեց հանրապետություններով՝ Հայաստանի, Ռուսաստանի, Պելառոսի, Ղազախստան, Ղրղսիստան եւ Տաճիկիստանի մասնակցությամբ: Կազմակերպության կանոնադրությամբ, որպես գլխավոր նպատակը դրված է անդամ երկիրներու տարածքային ամբողջականության եւ ինքնավարության ապահովում՝ Հալածակալի պաշտպանության հիման վրայ:

2022-ին, երբ Ատրպեյճան ներխուժեց Հայաստանի ինքնիշխան տարածք, Երեւան օգնության համար դիմեց ՀԱՊԿ-ին, սակայն հիմնականին մէջ Ռուսաստանի կողմէ ղեկավարուող այդ կազմակերպությունը մերժեց ընդառաջել Հայաստանի խնդրանքին՝ պատճառաբանելով թէ Հայաստան-Ատրպեյճան սահմանը տակաւին ճշգրտուած չէ: Երկու ամիս ետք՝ Նոյեմբերին Երեւանի մէջ կայացաւ ՀԱՊԿ գագաթի ժողովը, որուն ընթացքին վարչապետ Փաշինեան պահանջեց, որպէսզի Կազմակերպությունը յստակ դիրքորոշում արտայայտէ Ատրպեյճանի կողմէ Հայաստանի դէմ յարձակումներուն եւ հնչող սպառնալիքներուն կապակցութեամբ: Սակայն, ժողովին ներկայ նախագահները մերժեցին ընդառաջել այդ դիմումին եւս: Այդ օրէն ի վեր Հայաստան-ՀԱՊԿ յարաբերութիւնները սկսան գահավիժիլ՝ մօտենալով ամբողջական խզումի եզրին:

Վերջին ամիսներուն Հայաստան մերժեց մասնակցիլ ՀԱՊԿ-ի տարբեր մակարդակներու հանդիպումներուն՝ հասնելով հոն, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան Պելառոսի նախագահ Ալեքսանտր Լուկաշենքոյին տեղեկացուց, որ պիտի չկարողանայ մասնակցիլ օրերս Մինսքի մէջ տեղի ունեցող ՀԱՊԿ-ի հերթական գագաթի ժողովին: Երեւան նաեւ պահանջեց, որպէսզի օրակարգէն հանուի Հայաստանին օգնութիւն տրամադրելու հարցը: Այդուհանդերձ, Կազմակերպության քարտուղարութիւնը եկաւ յայտարարելու որ, պիտի չարձանակեն քննարկել Հայաստան դիտորդներ ուղարկելու աշխատանքները:

Սեպտեմբերեան պատերազմէն ասդին շատ ջուր անցաւ կամուրջին տակէն: Հայաստան ժամանեց Եւրոպական դիտորդական առաքելութիւնը, բանակը սկսաւ

Արդարադատութեան Միջազգային Դատարանը Բաւարարած է Հայաստանի Թիւով 5-րդ Միջնորդութեան Պահանջները

Արդարադատութեան Միջազգային Դատարանը «Հայաստանն ընդդէմ Ատրպեյճանի գործով» բաւարարած է Հայաստանի թիւով 5-րդ միջնորդութեան պահանջները, կը տեղեկացնէ Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչը՝ նշելով, որ Հայաստանը այս միջնորդութիւնը ներկայացուցած էր Սեպտեմբեր 19-ին Լեոնային Ղարաբաղի վրայ Ատրպեյճանի յարձակումէն անմիջապէս յետոյ:

Չնայած Հոկտեմբեր 12-ին կայացած դատական լսումներու ժամանակ Ատրպեյճանի կողմէ կատարուած որոշ յանձնառութիւններու՝ Դատարանը, այնուամենայնիւ, գտած է, որ անոնք բաւարար չեն Լեոնային Ղարաբաղի հայերու իրաւունքներուն անդառնալի վնաս հասցնելու վտանգը ամբողջովին վերացնելու համար:

Ըստ այդմ, մինչեւ գործով վերջնական վճիռի կայացումը Դատարանը Ատրպեյճանէն պահանջած է ապահովել Լեոնային Ղարաբաղը լքած եւ վերադառնալ




Արդարադատութեան Միջազգային Դատարանը իր նիստերէն մեկուն ընթացքին

ցանկացող անձերու անվտանգ, անարգել եւ արագօրէն վերադարձը, իսկ Լեոնային Ղարաբաղի մէջ մնացած եւ հեռանալ ցանկացող անձեր կարենան այդ ընել անվտանգ, անարգել եւ արագօրէն, Լեոնային Ղարաբաղի մէջ գտնուողները գերծ ըլլան

ուժի կիրառումէն կամ ահաբեկումէն, որ կրնայ անոնց փախուստի պատճառ դառնալ:

Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչը կը յիշատակէ

ԱՄ Տերակոյտը Միաձայն Հաստատեց Հայաստանի Անվտանգութեան Ապահովման Միտումը Արձանագրութիւնը



ԱՄ Տերակոյտը միաձայն ընդունած է Հայաստանի անվտանգութեան ապահովման միտումը «S.3000» արձանագրութիւնը: Այն երկու տարի ժամկետով կ'առաջարկէ ԱՄ Նախագահին կասեցնել 1992 թուականին ընդունուած յայտնի՝ «Ազատութեան աջակցութեան արձանագրութեան» 907 ենթաբաժինը շրջանցելու իրաւունքի կիրառումը, որ, փաստօրէն, կը կատարուէր Ատրպեյճանին ամերիկեան ռազմական օգնութիւն տրամադրելու համար:

Երկու կուսակցութիւններուն աջակցութիւնը ստացած այդ օրինագիծը ԱՄ Քոնկրէսի Վերին Պալատի հաստատման ներկայացուած էր դեմոկրատական ծերակուտական Կերի Փիթերզի կողմէ՝ այս Սեպտեմբեր 29-ին: Օրինագիծը ուժի մէջ պիտի մտնէ Ներկայացուցիչներու Տան հաւանութիւնը ստանալէ եւ ԱՄ Նախագահին կողմէ ստորագրուելէ յետոյ:

«Ամերիկայի Չայն»-ի հայկական ծառայութիւնը հարցում ուղղած է ԱՄ Պետական Քարտուղարութեան այն մասին թէ, հաշուի առնելով Արեւմտեան օրեւէ հարթակի մէջ հանդիպում ունենալու Ատրպեյճանի դժկամութիւնը, Միացեալ Նահանգները ի՞նչ կը համարէ Հայաստան-Ատրպեյճան բանակցութիւններու յաջորդ քայլը: Հարցումին ի պատասխան, Պետական Քարտուղարութիւնը ընդգծած է երկու երկիրներուն միջեւ ուղիղ բանակցութիւններու կարեւորութիւնը:

«Միացեալ Նահանգները կը շարունակէ ներգրաւել երկու երկիրներուն ղեկավարութիւնը արժանապատիւ եւ տեւական խաղաղութեան հասնելու համար, ուր բոլորին իրաւունքները յարգուած են: Կը կարծենք՝ կարեւոր է, որ Հայաստանն ու Ատրպեյճանը ուղիղ ձեւով քննարկեն եւ լուծեն հարցերը», ըսուած է Պետական Քարտուղարութեան հաղորդագրութեան մէջ:

Ատրպեյճանը Առանց Միջնորդներու Հանդիպում Կ'առաջարկէ

«Ատրպեյճանը պատրաստ է Հայաստանի հետ երկկողմ ուղիղ բանակցութիւններու՝ խաղաղութեան համաձայնագրի շուտափոյթ աւարտին համար», յայտարարած է Ատրպեյճանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը:

«Մենք կը կարծենք, որ երկու երկիրները պէտք է միասին որոշեն իրենց յարաբերութիւններու ապագան», կը պնդէ պաշտօնական Պաքոն եւ կ'ընդգծէ. «Բանակցութիւններուն մէջ այս լծացումը չի նպաստեր տարածաշրջանի կայունութեան»:

«Խաղաղ գործընթացի շարունակման պատասխանատուութիւնը, այդ շարքին՝ փոխադարձաբար ընդունելի վայրի ընտրութիւնը կամ պետական սահմանին հանդիպելու որոշումը, կը պատկանի երկու երկիրներուն», կը շեշտէ Ատրպեյճանի դիւանագիտական գերատեսչութիւնը՝ հայկական կողմին յորդորելով «խուսափիլ նոր անհարկի ձգձգումներէ»:

«Խաղաղ գործընթացի շարունակման պատասխանատուութիւնը, այդ շարքին՝ փոխադարձաբար ընդունելի վայրի ընտրութիւնը կամ պետական սահմանին հանդիպելու որոշումը, կը պատկանի երկու երկիրներուն», կը շեշտէ Ատրպեյճանի դիւանագիտական գերատեսչութիւնը՝ հայկական կողմին յորդորելով «խուսափիլ նոր անհարկի ձգձգումներէ»:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Փողոցային Պայքարը Չախողած

Ընդդիմութիւնը Փորձում Է Յիշեցնել Հանրութեանը, Որ Ինքը Կայ, Պարապ Չի Նստել

ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Խորհրդարանական ընդդիմութիւնը որոշել է քաղաքական աշունք եզրափակել ռազմահայրենասիրական ակորդով՝ շրջանառութեան մէջ դնելով «Հայաքուէ» կոչուող քաղաքացիական նախաձեռնութեան մասին յայտարարութեան նախագիծ եւ այս թեմայով հրաւիրելով Աժ լսումներ, որոնք տեղի կ'ունենան Նոյեմբերի 24-ին: Խորհրդարանական լսումներն այն ֆորմատն է, որը հնարաւորութիւն է տալիս փողոցային պայքարը ձախողած ընդդիմութեանը «տոնուսի» մէջ մնալ՝ յիշեցնել հանրութեանը, որ ինքը կայ, պարապ չի նստել եւ թեմա է գտել ու «բզբզում է»:

Աժ կայքում գետեղուած՝ «Հայաստան» խմբակցութեան հեղինակած յայտարարութեան նախագիծին կից ներկայացուած է հիմնաւորում, որտեղ դրա հեղինակները փորձել են մէկմէկու կապել միմեանցով չպայմանաւորուած իրողութիւններ՝ ծիծաղելիութեան աստիճանի ուռճացնելով վերոյիշեալ նախաձեռնութեան նախագծի կշիռն ու նշանակութիւնը:

Պատմական էքսկուրս սկսելով 1988-ից՝ Արցախեան շարժումից, հասնելով մինչեւ 1992 թ. ՀՀ Գերագոյն խորհրդի որոշում, որով սահմանուած է, թէ «ՀՀ-ի համար անընդունելի է ներպետական եւ միջազգային ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեւոնային Ղարա-

բաղը նշուած կը լինի Ատրպէյճանանի կազմում», այնուհետ յղում անելով ՀՀ կառավարութեան 2021-2026 թթ. ծրագրի, խորհրդարանական երեք ֆրակցիաների նախընտրական ծրագրերի՝ Արցախին վերաբերող ձեւակերպումներին՝ «Հայաստան» խմբակցութիւնը մասնաւորապէս նշում է.

«Ներկայումս, երբ Արցախի Հանրապետութիւնը հայազրկուել է 2020 թուականի Սեպտեմբերի 27-ին նրա դէմ Ատրպէյճանանի կողմից սկսուած պատերազմի, 9-ամսեայ շրջափակման, 2023 թ. Սեպտեմբերի 19-ին սկսուած լայնածաւալ ռազմական ներխուժման, Արցախի ժողովրդի ցեղասպանութիւնն ու էթնիկ զտումները աւարտին հասցնելու նպատակով իրականացուած բռնագաղթի հետեւանքով, կրկին կարեւորուած են ՀՀ կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի աջակցութիւնը եւ հետեւողական ջանքերը՝ օկուպացիայի պայմաններում վերականգնելու նրա սուբիեկտայնութիւնը եւ վերադարձնելու նրա իշխանութիւններին բանակցային գործընթաց: Այս համատեքստում կարեւոր նշանակութիւն է ստանում «Հայաքուէ» քաղաքացիական նախաձեռնութեան ներկայացուած օրէնքի նախագիծը: ...Այն յաւելեալ կուռան է հանդիսանում՝ հակազդելու Ատրպէյճանանի կողմից որդեգրուած ցեղասպան վարքագծին, ինչպէս նաեւ դիմադրա-

ւելու ՀՀ տարածքային ամբողջականութեանն ու ինքնիշխանութեանը, Հայոց պետականութեանը ներկայացուած սպառնալիքները՝ դրանց հակադրելով ՀՀ ժողովրդի հաւաքական կամքը եւ ժողովրդավարական գործելաոճը»:

Զգիտէինք, որ «Հայաստան» խմբակցութիւնում ծուարել են քաղաքական ուժանտիկներ, աւելի ճիշտ՝ ինֆանտիլներ, որոնք թրծուած լինելով քաղաքական վայրիվերումներում՝ փաստօրէն, վարդազոյն ակնոցներով են նայում հարեւանների հետ յարաբերութիւնների կարգաւորմանը: Եւ միամտօրէն հաւատում են, որ եթէ մեր խորհրդարանը մի գիլ օրէնքի նախագիծ ընդունի ու ՀՀ իշխանութեանը «տուպիկը» մտցնի՝ գրկելով դիւանագիտական ճկունութիւնն անհեղինակ գործիքակազմից, ապա հարեւան երկրները կ'ազդուեն այդ օրէնքից եւ իրենց խելքը ու գուսպ կը պահեն: Մասնաւորապէս Ատրպէյճանանն էլ, փաստօրէն, տեղեկանալով, որ ՀՀ Աժ-ն նման նախագիծ է ընդունել՝ քրէականացրել է Արցախը այլ պետութեան կազմում ճանաչելու ու Հայոց ցեղասպանութեան ճանաչումից հրաժարուելը, զարգանդելու է ու ձեռքերը վեր պարզած յանձնուելու է՝ դուրս է գալու Ստեփանակերտից, Արցախի պետականութիւնը խորհրդանշող հիմնարկների վրայից հանելու է ատրպէյճանական դրօշներն ու վազելով

գնալու, նստելու է բանակցային սեղանի շուրջ՝ վայրկեան առաջ խօսելու վերականգնուած սուբիեկտայնութեամբ Արցախի հետ: Աւելին, զգուշանալով ՀՀ խորհրդարանի կողմից ընդունուած այս հասցողու նախագիծից՝ չի յարձակուելու ՀՀ ինքնիշխան տարածքի վրայ՝ վախենալով հայ ժողովրդի «հաւաքական կամքից» (որը, փաստօրէն, «Հայաքուէ»-ին միացած 58 հազար հոգին է) եւ «ժողովրդավարական գործելաոճից»:

Սա ինչ է, եթէ ոչ նախընտրութիւն, Արցախի թեմատիկան շահարկելու հերթական պարապ գրադմունք: Խնդիրն այն է, որ անցած 30 տարիների ընթացքում թէ Արցախի վրայ, թէ ՀՀ-ի վրայ յարձակուելիս Ատրպէյճանանին հետ չեն պահել ոչ ՀՀ անկախութեան հռչակագիրը եւ դրանում առկայ արձանագրումները, ոչ ԳԽ վերոյիշեալ որոշումը, ոչ ՄԱԿ-ի՝ ՀՀ քրէական օրէնսգրքով ամրագրուած՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ զինուած յարձակման, ակրեսիայի մասին յօդուածները եւ ոչ էլ ՄԱԿ-ի կանոնադրութեան 2-րդ յօդուածի 4-րդ կէտը, որի համաձայն՝ ՄԱԿ-ի բոլոր անդամները միջազգային յարաբերութիւններում ձեռնպահ են ցանկացած պետութեան տարածքային ամբողջականութեան կամ քաղաքական անկախութեան նկատմամբ եւ կամ Միաւորուած ազգերի նպատակներին անհարիր որեւէ այլ ձեւով ուժի գործադրումից կամ սպառնալիքից:

«CIVIC.am»

Ատրպէյճանը Հրաժարուում Է Արեւմտեան Հարթակներից Եւ Կարող Է Սրացում Հրահրել

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նոյեմբերի 15-ին ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջեյմս Օ'Բրայանը Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի վերաբերեալ մի շարք ուշադրաւ յայտարարութիւններ արեց ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում «Լեւոնային Ղարաբաղի ապագան» թեմայով անցկացուած լսումների ընթացքում:

Օ'Բրայանը, մասնաւորապէս, նշեց, որ Ուաշինկթոնը դադարեցրել է օգնութեան տրամադրումը Պաքուին, չեղարկել է ատրպէյճանական մի քանի բարձրաստիճան պատուիրակութիւնների այցերը Միացեալ Նահանգներ՝ ընդգծելով, որ ամերիկա-ատրպէյճանական յարաբերութիւնները չեն կարող շարունակուել նախկին ռեժիմով, քանի դեռ Պաքուի ու Երեւանի միջեւ ընթացող բանակցութիւններում առաջընթաց չգրանցուի:

Օ'Բրայանը ուղիղ տեքստով յայտարարեց, որ Հարաւային Կովկասում խաղաղութեան հեռանկարները կախուած են Ատրպէյճանանի որոշումներից՝ չբացառելով պատժամիջոցների կիրառումը Պաքուի նկատմամբ՝ վեջինիս կողմից Հայաստանի դէմ նոր ազդեակ գործողութիւնների իրականացման դէպքում: Կոնգրեսում տեղի ունեցած քննարկման յաջորդ օրը Ատրպէյճանի արտգործնախարարութիւնը, արձագանքելով Օ'Բրայանի ելույթին, հանդէս եկաւ յայտարարութեամբ եւ յայտնեց, որ չեղարկում է մասնակցութիւնը Նոյեմբերի 20-

ին Ուաշինկթոնում նախատեսուած արտգործնախարարների հանդիպմանը: ԱԳՆ յայտարարութեան մէջ նշուած էր նաեւ, որ Պաքուն «նման պայմաններում Ատրպէյճանան ԱՄՆ-ի բարձրաստիճան ներկայացուցիչների այցերի հնարաւորութիւնն անտեղի է համարում»:

Ատրպէյճանանի այս դեմարշը ամբողջովին համապատասխանում է վերջին երկու ամիսների ընթացքում տեղի ունեցող գործընթացների տրամաբանութեանը: Պաքուն Արցախի էթնիկ զտումը աւարտելուց յետոյ արդէն իսկ հրաժարուել է արեւմտեան հարթակներում կազմակերպուած/ծրագրուած երեք հանդիպումներից (Գրանադա, Պրիւսել, Ուաշինկթոն):

Վերջին մէկ տարուայ ընթացքում Արեւմտաքի ակտիւ ներգրաւուածութեամբ ստանալով բոլոր հնարաւոր քաղաքական գիջողումները Հայաստանից եւ լեզիտիմացնելով իր գործողութիւնները Լեւոնային Ղարաբաղում՝ Ատրպէյճանանը այլեւս հետաքրքրուած չէ այդ հարթակներով:

Հասնելով իր գլխաւոր նպատակին՝ Լեւոնային Ղարաբաղի նկատմամբ վերահսկողութեան հաստատումն ու հայթափումը, Ատրպէյճանանը, ինչպէս եւ կանխատեսուած էր, շարունակում է առաւելապաշտական օրակարգով առաջ շարժուել նաեւ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործըն-

թացում առկայ այլ օրակարգերում: Այդ առումով արեւմտեան հարթակներում ձեւաւորուած որոշ սկզբունքներ, ինչպէս նաեւ Պրիւսելից ու Ուաշինկթոնից հնչող քննադատութիւնը Պաքուի նկատմամբ, անհանգստացնում են Ատրպէյճանանի իշխանութիւններին:

Պաքուն որոշում է կայացրել հրաժարուել արեւմտեան միջնորդութիւնից եւ բանակցութիւնները շարունակել կամ երկկողմանի, կամ էլ տարածաշրջանային ձեւաչափերում: Այդ մասին են վկայում ինչպէս վերոնշեալ զարգացումները, այնպէս էլ Ատրպէյճանանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութիւնները Թբիլիսիում ու Բիշքեկում, որոնք արուել են շաբաթներ անառջ:

Ատրպէյճանանական այլ բարձրաստիճան պաշտօնեաների մեկնաբանութիւնները եւս պնդում են դրա մասին: Այսպէս, Ատրպէյճանանի նախագահի արտաքին քաղաքական հարցերով օգնական Հիքմեթ Հաջիեւը Նոյեմբերի 17-ին Eurereporter կայքի հետ հարցազրոյցում նշել է, որ խաղաղութիւնն ու տարածաշրջանային կայունութիւնը ոչ թէ Պրիւսելում, Փարիզում կամ Ուաշինկթոնում են, այլ տարածաշրջանում:

Ստեղծուած իրավիճակում բաւականին դժուար է լինելու

Շար.ը էջ 6

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԷ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

2021-ի Համեմատ Աղքատութիւնը Կրճատուած Է՝ 26,5-ԷՆ Դառնալով 24,8 Տոկոս. Փաշինեան

2018-էն ի վեր 170 հազարէն աւելի աշխատատեղ ստեղծած ենք Հայաստանի Հանրապետութեան մէջ: Այդ աշխատատեղերու աճ է աւելի քան 30 տոկոսով:

Ազգային ժողովին մէջ՝ 2024-ի պետական պիւտձէի քննարկման ժամանակ՝ իր եզրափակիչ ելոյթին, այս մասին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ուզում եմ արձանագրել նաեւ, որ 2021-ի համեմատ աղքատութիւնը կրճատուել է՝ 26,5 տոկոսից դառնալով 24,8 տոկոս: Ծայրայեղ աղքատութիւնը 1,5 տոկոսից դարձել է 1,2 տոկոս: Բայց էլի եմ ասում՝ մենք չենք կարծում, որ գոյացող միլիոնները պէտք է բաժանենք ժողովրդին, որ նրանք աղքատութիւնը չաղթահարեն: Ո՛չ, մենք պէտք է աշխատելու հնարաւորութիւն ստեղծենք: Իւրաքանչիւրը պիտի իմանայ, որ աղքատութիւնը չաղթահարելու ճանապարհը միայն ու միայն աշխատանքն է, որովհետեւ մարդուն կարելի է մի օր հաց տալ, երկու օր հաց տալ, երեք օր հաց տալ, մի շաբաթ հաց տալ, մէկ ամիս հաց տալ, մէկ տարի հաց տալ, հինգ տարի կարելի է հաց տալ, բայց մարդուն պատրաստել նրան, որ դու չես աշխատելու, եւ կառավարութիւնը կամ հանրութիւնը քեզ ամբողջ կեանքը կերակրելու է, դա մարդու նկատմամբ ամենամեծ

նուաստացումն ու վիրաւորումն է:

«Աւելի մեծ վիրաւորանք մարդու նկատմամբ չի կարելի ուղղակի պատկերացնել: Եւ սա մեր քաղաքացու նկատմամբ մեր չարգանքի արտայայտութիւնն է: Աղքատութիւնը չաղթահարում են աշխատանքի միջոցով: Այսօր հազարաւոր մարդիկ օտար երկրներէ գալիս են Հայաստանի Հանրապետութիւնում աշխատելու: Ընդ որում՝ ասեմ, խօսքն աշխատունակ մարդկանց մասին է, որովհետեւ ոչ-աշխատունակ մարդկանց նկատմամբ վարուող քաղաքականութիւնը բոլորովին ուրիշ խնդիր է: Ես ընդգծում եմ՝ աշխատունակ, որովհետեւ վերջին շրջանում շատ է քննարկուում նաեւ, ես չեմ ուզում հաշմանդամութիւնը եւ աշխատունակութիւնը խառնենք իրար հետ, որովհետեւ դրանք տարբեր բաներ են:

«Բազմիցս եմ կրկնել, էլի ուզում եմ կրկնել, որ 20-րդ դարի մեծագոյն գիտնականներից մէկն իր կեանքի մեծ մասն անց է կացրել սայլակի վրայ՝ չկարողանալով խօսել, չկարողանալով շարժուել, եւ իր գիտական գործունէութեան մեծ մասը ստեղծել է սայլակի վրայ նստած՝ չկարողանալով խօսել, չկարողանալով շարժուել: Այս առումով կրթութեան ներառականութիւնը չափազանց կարեւոր մի ուղղութիւն է, որը մենք անընդհատ պէտք է զարգացնենք», ըսաւ ան:

Երեւանի Մէջ Սինակոկի Հրկիզման Դէպքով ՔԿ-ի Մէջ Վարոյթ Նախաձեռնուած Է



Երեւանի մէջ գործող Հրեական սինակոկը

Երեւանի մէջ սինակոկի հրկիզման դէպքով Քննչականին մէջ վարոյթ նախաձեռնուած է:

Քննչական կոմիտէի խօսնակ Գոռ Աբրահամեանի խօսքով, քննութիւն կ'իրականացուի. վարոյթը նախաձեռնուած է գոյքը դիտաւորութեամբ ոչնչացնելու կամ վնասելու յատկանիշերով: Քրէական վարոյթի շրջանակներուն մէջ ձեռք բերուող տուեալներէն ելլելով կրնայ նաեւ կատարուած

ծին այլ իրաւական գնահատական եւս տրուիլ:

Նոյեմբեր 16-ին լրատուամիջոցներուն մէջ տեղեկութիւններ տարածուած էին, որ անյայտ անձ մը փորձած է հրկիզել Երեւանի մէջ հրէական սինակոկի դռները: Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպանը անընդունելի եւ դատապարտելի որակած է պաշտամունքի կառոյցի նկատմամբ որեւէ ոտնձգութիւն:

Հրդեհ ԵՊՀ Մասնաշէնքի Նկուղային Յարկին Վրայ. Կայ Մէկ Ձոհի, Երեք Վիրաւոր

Երեւանի Պետական Համալսարանի առաջին մասնաշէնքի նկուղային յարկի սենեակներէն մէկուն մէջ հրդեհ բռնկած է:

ԵՊՀ-էն յայտնած են, որ նախնական վարկածով հրդեհը յառաջացած է հոսանքի տատանումէ, կայ մէկ զոհ եւ երեք վիրաւոր:

Առողջապահութեան Նախա-

րարութիւնը իր հերթին հաղորդած է, որ ԵՊՀ մասնաշէնքերէն մէկուն մէջ տեղի ունեցած դէպքին հետեւանքով երեք տուժած հիւանդանոց փոխադրուած է, անոնց կը ցուցաբերուի անհրաժեշտ բժշկական օգնութիւն:

Նախարարութիւնը եւս նշած է, որ պաթոլոմին հետեւանքով կայ մահուան դէպք:

Արցախի Պետական Հիմնարկներու Պահպանումը Սպառնալիք Է Հայաստանի Անվտանգութեան. Ալեն Սիմոնեան

Արցախի պետական հիմնարկներու պահպանումը սպառնալիք է Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան: Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրոյցին այս մասին ըսաւ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը: Ինչպէս յայտնի է, ՀՀ 2024 թուականի պիւտձէի նախագիծով Արցախի պետական հիմնարկներու պահպանման համար ֆինանսաւորում նախատեսուած չէ:

Հարցին, թէ Արցախի հարցը փակուած է, Ալեն Սիմոնեան պատասխանեց. «Մենք ունենք արցախահայութեան մեծ խնդիր: Այնտեղ պետականութիւն ստեղծելու կամ պետական հիմնարկներ պահելու եւ զարգացնելու, ինչ-որ բան անելու նպատակ ես չեմ տեսնում եւ համարում եմ, որ դա ՀՀ անվտանգութեանը ուղիղ սպառնալիք է եւ հարուած: Եւ կոչ եմ



Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան

անում մնացած բոլոր գործընկերներին նոյն տրամաբանութեամբ շարժուել»:

Սարունց. Հայկ Սարգսեանը Խախտած Է Օրէնքը՝ Հրապարակելով Զօրակոչիկներու Թիւը

Մինչ իշխանական պատգամաւորը կը պնդէ, որ պետական գաղտնիք չէ հրապարակած, երբ չաչտարարած է զօրակոչիկներու թիւը, տարիներով այդ վիճակագրութիւնը նախարարութեան չստացած իրաւապաշտպան Արթուր Սաքունցը կը հակադարձէ՝ Հայկ Սարգսեանը խախտած է օրէնքը:


«Խնդիրն այն է, որ օրէնքի առջեւ բոլորի հաւասար պատասխանատուութեան սկզբունքը՝ մէկ, միւսը՝ եթէ մի դէպքում համարուում է կամ մէկ այլ անձանց համար, այդ թուում՝ իրաւապաշտպան կազմակերպութեան համար համարուում է գաղտնիք, իսկ պատգամաւորի համար, թէկուզ կառավարող կուսակցութեան պատգամաւորի համար դա գաղտնիք չի հանդիսանում, ապա դա շատ տարօրինակ է», «Ազատութեան» հետ զրոյցին ըսաւ ան:

Արթուր Սաքունցը կը վկայակոչէ «պետական գաղտնիքի մասին» օրէնքը, ըստ որուն՝ գինուած ուժերու թուաքանակը պետական գաղտնիք կը համարուի, իսկ քրէական օրէնագիրքով այս տեղեկութեան հրապարակումը մինչեւ 6 տարուան բանտարկութիւն կը նախատեսէ:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագրի» պատգամաւորը ներկայացուց իր նախագիծը, որով կ'առաջարկէ բանակէն խուսափածները ազատել քրէական պատասխանատուութենէ մինչեւ 15 միլիոն դրամ:

Հայաստանի Խորհրդարանը Կը Քննարկէ 7,4 Միլիառ Տոլարի Ծախսեր Նախատեսող Պիւտձէի Նախագիծը

7,4 միլիառ տոլարի ծախսեր նախատեսող պիւտձէի նախագիծը արդէն խորհրդարանի նիստերու ղահլիճին մէջ կը քննարկուի: Գալիք տարուան մէջ ամենաշատը գումարը Աշխատանքի եւ Ընկերային Հարցերու Նախարարութեան պիտի յատկացուի՝ 1,8 միլիառ տոլար, կը յաջորդէ Պաշտպանութեան Նախարարութիւնը՝ 2024-ին գինուած ուժերուն համար կը նախատեսուի 1,4 միլիառ տոլար ծախսել: Բուն ռազմական կարիքներուն համար 635 միլիոն նախատեսած են, 700 միլիոնէն աւելին ալ



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

մի դիմաց: Հայկ Սարգսեանը բանակի մտահոգիչ իրավիճակը ներկայացնելու համար իր ձեռքին տակ ունեցած թիւերը հրապարակած էր:

«2010 թուականին ունեցել ենք աւելի քան 44 հազար ժամկէտային զինծառայող, եւ 9 տարուայ ընթացքում այդ թիւը պակասել է 44 տոկոսով, այսինքն՝ 44 հազարից դարձել է 24 հազար», յայտնած էր ան:

Բանակի խնդիրներով զբաղող Արթուր Սաքունցը կը յիշեցնէ իր՝ տարիներու ձախողութեան Նախարարութիւնը այս թիւը չհանրաչանցնելու իր իրաւունքը պաշտպանած է դատարանին մէջ:

պիտի ուղղուի տարբեր տեսակի շինութիւններու կառուցման:

Ծախսերու ծաւալով յաջորդը կրթութեան Նախարարութիւնն է: Իշխանութիւնները կը փափաքին յաջորդ տարի շեշտակի՝ 38 տոկոսով աւելցնել կրթութեան պիւտձէն, զայն դարձնելով 850 միլիոն տոլար:

2024-ի գլխաւոր ֆինանսական փաստաթուղթի վերաբերեալ պաշտօնեաները իրենց վերջնական մօտեցումները կը ներկայացնեն, ընդգիծմադիրներն ալ՝ դիտողութիւններն ու քննադատութիւնները:

ԼՈՒՐԵՐ

ԵԱՀԿ-ի Խորհրդարանական Վեհաժողովը Գումարուեցաւ Երեւանի Մէջ Երեւանն Ու Պաքուն Տակաւին Կը Խօսին Տարբեր Դիւանագիտական Լեզուներով. Փաշինեան



Վարչապետ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի Երեւանեան նստաշրջանի ընթացքին

Երեւանի մէջ, Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ, տեղի ունեցաւ Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ) աշխատանքի նստաշրջանը:

Թուրքիան, Ատրպէյճանն ու Ռուսաստանը չեն մասնակցած նիստին:

Համաժողովը տեղի կ'ունենար «ԵԱՀԿ-ը ճգնաժամի ժամանակ. վեհաժողովի դերը ներքին եւ արտաքին մարտահրաշխանութիւն արձագանգելու հարցով» խորհրդակցութեան շրջանակներէն նաեւ փոստով ղեկավարուող վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտնեց որ, Երեւանը Պաքուն կ'առաջարկէ փոխադարձաբար գործեր չունենալ Խորհրդային Միութեան վարչական սահմանէն աչտուաչտ կողմ, ինչպէս նաեւ հասցէագրել ներգաւառ/արտագաւառներու հարցերը: Փաշինեան շեշտեց՝ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքին մաս հանդիսացող արտագաւառ Արծուաշէնը, օրինակ, աւելի քան 30 տարիէ կը գտնուի ատրպէյճանական ներքոյ:

Փաշինեան նշեց, որ Երեւանն ու Պաքուն տակաւին կը խօսին տարբեր դիւանագիտական լեզուներով եւ շատ յաճախ չենք հասկնար իրարը: Վարչապետը անոր առարկայական պատճառներն ալ նշեց՝ «երկարամեայ հակամարտութիւնը պատմական որոշակի առումով, հազարաւոր զոհերը, որոնց հարազատների աչքերի մէջ շատ դժուար է նայել, տասնեակ գերիները, որոնց ընտանիքի անդամների հարցերին պատասխաններ չկան, տասնամեակներ գերիշխող ատելութեան մթնոլորտը եւ կասկածները, որ կառուցողական յայտարարութիւնների տակ թաքնուած են վատ մտադրութիւններ, ընդ որում ինչ ասում եմ, այս կամ այն պահով վերաբերու է եւ Հայաստանին, եւ Ատրպէյճանին»:

Շեշտելով, որ Ատրպէյճանը, օրինակ, որեւէ անգամ հրապարակային չլուծ է ըրած արդէն

համաձայնեցուած երեք սկզբունքներուն, չէ վերահաստատած իր հաւատարմութիւնը այդ սկզբունքներուն, փաշինեան նշեց՝ այդ կը խորացնէ անվստահութեան մթնոլորտը:

«Չփազանց կասկածելի է թուում նաեւ այն, որ Ատրպէյճանում բարձրագոյն հովանաւորութեամբ եւ ըստ էութեան պաշտօնական մակարդակում ՀՀ-ն սկսել են կոչել «արեւմտեան Ատրպէյճան»: Մա մեզ նոր պատերազմ, Հայաստանի դէմ նոր ռազմական յարձակում կազմակերպելու նախապատրաստութիւն է թուում եւ խաղաղութեան գործընթացի յառաջընթացի հիմնական խոչընդոտներից է», ըսաւ Գործադիրի ղեկավարը:

Անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն՝ փաշինեան նախ ընդգծեց, որ Երեւանը երկխօսութեան մէջ է նաեւ Անգարայի հետ, ապա շեշտեց՝ նախապէս նման աշխոյժ երկխօսութիւն երբեք չեն ունեցած:

Դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման առումով տակաւին որեւէ յաջողութիւն չունինք, ըսաւ վարչապետը՝ նկատելով, որ Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւններու կարգաւորումը կարեւորագոյն գործօն է Հարաւային Կովկասի՝ խաղաղ, զարգացող ու անվտանգ միջավայրի ռազմավարական տեսլականին համար:

«Յառաջիկայում յոյս ունենք Հայաստան-Թուրքիա սահմանի՝ երրորդ երկրների քաղաքացիների եւ դիւանագիտական անցագիր կրողներին համար բացելու նորու թիւերը լսել, եւ սա կը լինի մեծ խորհրդանիշ կողմ քայլ: Յոյս ունենք Հարաւային Կովկասը դարձնել աշխարհին լաւ նորութիւններ մատակարարող տարածաշրջան, եւ Հայաստանի Հանրապետութիւնը, ես անձամբ պատրաստ եմ կրել այս նպատակին հասնելու համար մեր բաժին պատասխանատուութիւնը», եզրափակեց Գործադիրի ղեկավարը:

«Եւ այս հայեցակարգը ուսուցանում են դպրոցներում, համալսարաններում, պետական լրատուամիջոցներով: Մա մեզ նոր պատերազմ, Հայաստանի դէմ նոր ռազմական յարձակում կազմակերպելու նախապատրաստութիւն է թուում, եւ խաղաղութեան գործընթացի յառաջընթացի հիմնական խոչընդոտներից է», ըսաւ Գործադիրի ղեկավարը:

Ստորագրուեցաւ Հայաստանի Մէջ ԵՄ Առաքելութեան Վերաբերեալ Համաձայնագիրը



ԵՄ առաքելութեան կարգավիճակի վերաբերեալ համաձայնագրի պաշտօնական ստորագրման արարողութիւնը

Արտաքին Գործերու Նախարարութեան մէջ կայացած է «Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրոպական Միութեան միջեւ Հայաստանի մէջ ԵՄ առաքելութեան կարգավիճակի վերաբերեալ» համաձայնագրի պաշտօնական ստորագրման արարողութիւնը:

Արտաքին Գործերու Նախարարութեան լրատուական վարչութեան փոխանցմամբ՝ համաձայնագիրը հայկական կողմէ ստորագրած է ՀՀ արտաքին գործերու նախարարի տեղակալ Պարոյր Յովհաննիսեանը, իսկ ԵՄ-ի կողմէ՝ Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Վասիլիս Մարակոսը: Պարոյր Յովհաննիսեանի փոխանցմամբ՝ համաձայնագիրը պէտք է նպաստէ ԵՄ առաքելութեան գործունէութեան աւելի արդիւնաւէտ իրականացման. «Խօսքը դիտորդների համար դիւրին պայմաններ ստեղծելու մասին է՝ սկսած առողջապահութիւնից մինչեւ տեխնիկական խնդիրներ: Դա նման է այն

լիազօրութիւններին, որոնք ունեն դիւանագէտները իւրաքանչիւր երկրում»:

Այս պահին, ըստ փոխնախարարին, խօսքը դիտորդներու թիւի աւելացման, կարողութիւններու ուժեղացման մասին է, «մասնաթի մասին դեռ վաղ է խօսիլ»: «Երրորդ կողմերից Գանատան է միացել առաքելութեանը, կայ հետաքրքրութիւն այլ երկրներից եւս», ըսած է Յովհաննիսեան:

Ըստ «Ազատութեան» աղբիւրներուն՝ Հայաստանի մէջ ԵՄ դիտորդներուն թիւը աւելցուած է 70-ով:

ԵՄ դեսպան Վասիլիս Մարակոսը, իր հերթին, ընդգծած է. «Մենք կը հաւատաք, որ սա պիտի ամրապնդէ մարդոց անվտանգութիւնը, մենք նաեւ կը նպաստենք տարածաշրջանին մէջ վստահութեան ամրապնդման: ԵՄ-ն յանձնառու է տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատման, եւ սա մեր գործիքներէն մէկն է, որ ունինք Հայաստանի մէջ»:

Քլար. Գնդակը Հիմա Ատրպէյճանի Դաշտն Է

Պրիւքսէյի մէջ չեն հասկնար՝ ինչո՞ւ Ալիեւի վարչակազմը ժամանակ կը ձգէ հիմա, երբ կողմերը այդքան մօտ են վերջնական համաձայնութեան, «Ազատութեան» ըսած է Հարաւային Կովկասի հարցերով Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Թոնյո Քլար: Եւրոպացի բարձրաստիճան դիւանագէտը կ'ընդգծէ՝ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման բանալին այժմ Պաքուի մէջ է, եւ առաջին հերթին Ատրպէյճանն է, որ պէտք է քաղաքական կամք դրսեւորէ:

«Մենք արագ քայլեր կ'ալկնկայենք հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ, եւ այստեղ է, որ որոշ մարդիկ Պրիւքսէյի եւ ԵՄ անդամ երկիրներու մէջ մտահոգուած են, որ այդ այսքան կ'երկարուի: Մենք չենք հասկնար՝ ինչո՞ւ կարգաւորման գործընթացը աւելի արագ չառաջ է՝ երթար», նշեց Քլար:

Անցած ամիսներուն Ատրպէյճանը երկու անգամ մերժեց Եւրոմիութեան միջնորդութեամբ Հայաստանի հետ հանդիպելու առաջարկը. մէկ պարագային Ալիեւը հրաժարեցաւ բանակցելէ Ֆրանսիայի մասնակցութեամբ, միւս պարագային ալ Պրիւքսէյ



Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Թոնյո Քլար

երթալու ժամանակ չգտաւ: Ու չի գտներ մինչեւ հիմա՝ չնայած Եւրոմիութեան ջանքերուն ու յորդորներուն: «Գնդակը հիմա Ատրպէյճանի դաշտն է», կ'ըսէ Թոնյո Քլար:

«Եւրոպական մայրաքաղաքներուն մէջ մենք պատճառ չենք տեսներ՝ ինչո՞ւ այս գործընթացը այսքան կը ձգձգուի: Պահը կայ, հնարաւորութիւնը կայ, ժամանակն է անկէ օգտուելու: Մենք քաղաքական կամք կ'ուզենք տեսնել, նախ եւ առաջ՝ Ատրպէյճանէն, քանի որ այն ուժեղ կողմն է», յայտնեց Թոնյո Քլար:

ԱՄՆ-ն Եւ Եւրոպան Զայաստանը Անդրատլանտեան Զամայնքին Մերձեցնելու Ծրագիր Կը Մշակեն



ԱՄՆ Պետական Քարտուղարութեան Անդրադարձիչ Ծէյնձ Եւրոպայը

ԱՄՆ-ն եւ Եւրոպան միասին Հայաստանը Անդրատլանտեան համայնքին մերձեցնելու ծրագիր կը մշակեն: ԱՄՆ Գոնկրէսի Ներկայացուցիչներու պալատին մէջ Լեոնային Ղարաբաղին նուիրուած լսումներուն ժամանակ այս մասին լսած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան Եւրոպայի եւ Եւրասիական տարածաշրջանի հարցերով բիւրոյի քարտուղարի տեղակալ ձեռնարկ Եւրոպայը:

«Եւրոպայի անվտանգութեան խնդիրները մեր համայնքներուն: Ես այդ քննարկած եմ քանի մը օր առաջ վարչապետին (Փաշինեանի) հետ, եւ մենք հիմա կը փորձենք մշակել անոր ձեռքը», լսած է ամերիկացի դիւանագետը:

«Առաջարկը, որ ԵՄ-ն կրնայ ընել առեւտրային նախապատուութիւններու, տնտեսական համագործակցութեան եւ միասնական

շուկայ մուտք գործելու առումով, աներեւակայելի կարեւոր է: Մենք կրնանք օգնել այս հարցով», լսած է Օ'Պրայըն: Ան նշած է, որ դաշնակիցները այժմ «ճանապարհի մէջ տեղն են» եւ կը փորձեն հասկնալ, թէ ինչպիսին կրնայ ըլլալ տնտեսական ապագան:

Պետական քարտուղարին օգնականը նաեւ լսած է, որ Միացեալ Նահանգները եւ Եւրոպան կ'աշխատին Հայաստանի անվտանգութեան ապահովման յաւելեալ միջոցներու վրայ՝ չի շեղելով այս ոլորտին մէջ Ֆրանսայի «նշանակալի» օգնութեան մասին:

Հարցումին, թէ ինչ գործիքներ պատրաստ է կիրառելու Ուշինկի թերթը՝ խաղաղութեան օրակարգը իր աւարտին հասցնելու համար, Օ'Պրայընը պատասխանած է. «Մենք կը դիտարկենք մեր ունեցած բոլոր գործիքները: Ես չեմ պատրաստուիր կանխատեսումներ ընելու հնարաւոր պատժամիջոցներու վերաբերեալ, բայց այդ, ի հարկէ, նոյնպէս մեր զինանոցին մէկ տարրն է», ընդգծած է ան:

Երուսաղէմի Ոստիկանութիւնը Զայերէն Պահանջած Է Ազատել «Կովերու Պարտեզի» Վիճելի Տարածքը



Երուսաղէմի հայերէն տեղի ոստիկանութիւնը պահանջած է ազատել «Կովերու պարտեզ»ի տարածքը՝ մեղադրելով զանոնք գոյքի իւրացման մէջ: X-ի իր էջով տեղեկացուցած է Դանիէլ Սեյդմանը՝ գրելով, որ հայ համայնքը կ'ընդդիմանայ:

«Ոստիկանութիւնը կը կատարէ հայկական թաղամասի վերաբնակիչներուն հրամանները. կը պահանջէ, որ բնակիչները ազատեն տարածքը, իսկ պաշա-

րողները՝ տիրանան», գրած է ան:

Յիշեցնենք, որ Նոյեմբեր 12-էն հայերու մեծ խումբ մը, պատրիարքարանի հետ համագործակցելով, հերթապահութիւն կ'իրականացնէ «Կովերու պարտեզ»ի տարածքին մէջ եւ ի նշան բողոքի՝ ինքնաշարժներով եւ պարիսպներով փակած են պատի մուտքը՝ կանխելու տարածքին մէջ հետագայ անօրինական շինարարութիւնը:

Զնդկաստանը Զայաստանին «Marg 155» Ինքնագնաց Զառնակներ Պիտի Տրամադրէ



Հրետանային համակարգերու արտադրութեամբ զբաղող հնդկական Bharat Forge ընկերութիւնը հաստատած է, որ վերջերս ցուցադրուած «MARG 155» անուանուած ինքնագնաց հաուպիցները նախատեսուած են Հայաստանի համար: Այս մասին կը հաղորդէ idrw.org-ը (Indian Defense Research Wing):

Հաղորդագրութեան համաձայն՝ «MARG 155»-ը արդիական հրետանային համակարգ է, որուն մէջ միաւորուած են հզօրութիւնը, ճշգրտութիւնը եւ շարժունակութիւնը: 155 միլիմետր/39 տրամաչափի թնդանօթով, քարշակող 4 անիւներով համակարգը բացառիկ մանեւրականութիւն կ'ապահովէ որեւէ տեղանքի մէջ: Մինչեւ 30 աստիճան անկիւնները յաղթահարելու, «կրակել եւ փախչելու» կարողութիւնները զայն կը դարձ-

նեն ընդհանրական եւ անհրաժեշտ մարտական ժամանակակից բեմադրութիւններուն մէջ, նշուած է հաղորդագրութեան մէջ:

«Հայաստանի հետ գործարքը հիմնուած է երկու երկիրներու միջեւ ռազմավարական համագործակցութեան վրայ, ինչով Հնդկաստանը պաշտպանական սպառազինութեան առանցքային մատակարար դարձած է Հայաստանի համար: 2020 թուականին Հայաստանը Հնդկաստանէն ձեռք բերած է 4 միաւոր «Swathi» շարժական ռատարներ, եւ 2022 թուականի Սեպտեմբերին «Pinaka» բազմափող հրթիռային կայաններու, հակահրասայլային հրթիռներու եւ տարբեր տեսակի զինամթերքի ձեռքբերման 245 միլիոն տոլարի պայմանագիր ստորագրուած է», կը փոխանցէ հնդկական պարբերականը:

Ազատ Արձակուել Ետք Զրանդ Տիւրք Սպաննած Օկիոն Սամասին Նոր Մեղադրանք

2007 թուականի Յունուար 19-ին Սթամպուլի մէջ թրքական հաշակեզու «Ակոս» թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տիւրքը սպաննած Օկիոն Սամասին նոր մեղադրանք առաջադրուած է:

Ըստ «APA» ատրպէյճանական լրատուական գործակալութեան, Սամասի կը մեղադրուի «գինուած անաբեկչական կազմակերպութեան համար յանցագործութիւն կատարելու» մէջ եւ կրնայ դատապարտուիլ 7,5-էն մինչեւ 12 տարուան բանտարկութեան:

Օկիոն Սամասի Նոյեմբեր 15-ին պայմանական վաղաժամկէտ ազատ արձակուած էր՝ բանտին մէջ 16 տարի 10 ամիս անցընելէ յետոյ: Ըստ «BBC»-ի թրքական ծառայութեան, Տիւրքի մարդասպանը դիմաւորած են ընտանիքի անդամները:

Թրքական «NTV»-ի տեղեկութիւններով՝ Հրանդ Տիւրքի հարազատները, մասնաւորաբար անոր այրին՝ Ռաքէլը, առայժմ կը մերժեն մեկնաբանել Օկիոն Սամասի ազատ արձակումը:

«Արեւմտեան Ատրպէյճան»ի Մասին 3այտարարութիւններուն Ծանօթ Չեն». Փետրով

Քրեմլինի խօսնակ Տիւրքի Փետրով մերժած է մեկնաբանել Հայաստանի վարչապետին վերջին յայտարարութիւնները, որոնց մէջ Նիկոլ Փաշինեան խօսած էր Պաքուի կողմէ «արեւմտեան Ատրպէյճան» եզրոյթի օգտագործման մասին:

«Ես Ատրպէյճանէն պետական մակարդակով հնչող նման յայտարարութիւններու ծանօթ չեմ», յայտնած է Քրեմլինի պաշտօնական ներկայացուցիչը:

Փետրովի խօսքով՝ հակառակը, Մոսկուայի մէջ Ատրպէյճանէն միանգամայն այլ յայտարարութիւններ լսած են:

«Մենք Ատրպէյճանի ղեկավարութեան այն յայտարարութիւնները լսած ենք, որոնց մէջ կը խօսուի փուլի մը աւարտին եւ խաղաղ համաձայնագրի պատրաստակամութեան փուլին անցնելու անհրաժեշտութեան մասին»,



Քրեմլինի խօսնակ Տիւրքի Փետրով

պնդած է Տիւրքի Փետրով՝ յաւելելով, որ «այդ իսկ պատճառով պարոն Փաշինեանի յայտարարութեան այդ մէկ հատուածին պահով ոչինչ կրնամ ըսել»:

Հայաստանի ճատրակի Տղամարդոց խումբը՝ ԵԱ-ի Պրոնգի Մետալակիր



Հայաստանի ճատրակի տղամարդոց ընտրանին դարձած է Եւրոպայի խմբային ախոյեանութեան պրոնգի մետալակիր: Չեռնոգորիայի Պուտովա քաղաքին մէջ ընթացող ախոյեանութեան վերջին փուլին Հայաստանի տղամարդոց խումբը մրցեցաւ Անգլիոյ հետ եւ առաւելութեան հասաւ 2,5-1,5 արդիւնքով:

Ընտրանիի կազմին մէջ յաղթանակ տուեց Շանթ Սարգսեանը՝

պարտութեան մատնելով Մայքըլ Ատամզը: Հայկ Մարտիրոսեանը, Գաբրիէլ Սարգսեանը եւ Սամուէլ Տէր Սահակեանը հաւասարութեամբ աւարտեցին:

Հայաստանի տղամարդոց խումբը մրցաշարային աղիւսակին մէջ զբաղեցուց 3-րդ հորիզոնականը: Առաջին եւ երկրորդ տեղերուն Սերպիոյ եւ Գերմանիոյ խումբերն են:

ՀԱՊԿ-ի Ուշացած Քայլը

Շարունակուած էջ 1-էն

գինուիլ այլ երկիրներու արտադրութեան գինատեսակներով ու հրաժարիլ ռուսական ռազմական սկզբունքներէն, Արցախը հայաթափուեցաւ Ռուս խաղաղապահներու անգործութեան ու լուռ մեղսակցութեան պատճառաւ: Ներկայիս Եւրոպան ու Միացեալ Նահանգները Հայաստանի հողային ամբողջականութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը դարձուցած կարմիր գիծ՝ զգուշացնելով Պաքուին իր չմտածուած քայլերու հետեւանքներուն մասին:

ման վրայ Նախիջեւանը Ատրպէյճանին կապող ճանապարհը կամ այսպէս կոչուած «Ձանգեզուրի միջանցքը», պէտք է հսկեն Ռուսաստանի սահմանապահ ուժերը: Տարօրինակ է այս մտտեցումը երբ նկատի ունենանք որ, այդ եռակողմ յայտարարութեան բոլոր կէտերը խախտուած են Ատրպէյճանի եւ Ռուսաստանի կողմէ եւ այժմ կեդրոնացած են մէկ կէտի վրայ, որուն ժամանակին համաձայնած է Հայկական կողմ: Ներկայիս այդ եռակողմ համաձայնութիւնը դադարած է գոյութիւն ունենալ եւ դարձած է մեռած փաստաթուղթ: Լազիւնի միջանցքը ապահովել չկարողացողը այժմ կ'ակնկալէ որ, «միջանցքը» յանձնուի իրեն:

Այսօր, Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւնները կը գտնուին ճգնաժամի առջեւ: Որքան որ ալ Մոսկուան մեղադրէ Արեւմուտքին, որ ան կը փորձէ սեպ խրել երկու երկիրներու բարեկամութեան մէջ, ներկայ իրավիճակի գլխաւոր պատասխանատուն Քրեմլինի ղեկավարութիւնն է, որ 44-օրեայ պատերազմէն ասդին դատապարտումի ոչ մէկ խօսք ըսած է եւ ոչ ալ զօրակցութիւն յայտնած է իր դաշնակիցին՝ ի տես Պաքուի յարձակումներուն եւ ռազմատենչ յայտարարութիւններուն:

Ժամանակին Մոյն Պելառուսի նախագահը յայտարարեց ըսելով՝ «Նիկոլը երթալիք տեղ չունի» ակնարկելով Ռուսաստան-Պելառուս միութեան պետութեան Հայաստանի միանալու մասին: Ժամանակը եկաւ ցոյց տալու որ, Հայաստան գտած է իր երթալիք տեղը եւ դիմացիները մտածելու շատ բան ունին: Հայաստան կ'երթայ իր որդեգրած ժողովրդավարական արժեհամակարգին ուղիւթեամբ, հեռանալով միապետական վարչակարգերէն: Հետեւաբար, ՀԱՊԿ-ի եւ Ռուսաստանի քայլերը ոչ միայն ուշացած են, այլեւ դարձած են իմաստազուրկ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Արդարադատութեան Միջազգային Դատարանը

Շարունակուած էջ 1-էն

շեցնէ, որ Ատրպէյճանը միակողմանի յանձնառութիւններ ստանձնած էր կարմիր խաչի Միջազգային կոմիտէի հասանելութիւնը ապահովելու եւ ՄԱԿ-ի կողմէ ստուգումներ կատարելու, մշակութային յուշարձանները պահպանելու եւ չվնասելու կամ չոչնչացնելու վերաբերեալ, դատարանը վերահաստատած է, որ անոնք իրաւաբանական պարտադիր ուժ ունին:

դին վերաբերող հրապարակուած վճիռը: Այս մասին յայտարարած է Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը՝ նշելով, որ դատարանը իր այդ վճիռով հաստատած է «Ղարաբաղի հանդէպ Ատրպէյճանի ինքնիշխան իրաւունքները, ինչպէս նաեւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը»:

Դատարանը միաժամանակ պարտաւորեցուցած է Ատրպէյճանին «հաշուետուութիւն ներկայացնել կիրառուած ժամանակաւոր միջոցներու եւ Դատարանին մէջ Ատրպէյճանի ներկայացուցիչին կողմէ ստանձնած պարտաւորութիւններու կատարման ուղղուած քայլերու վերաբերեալ ուժ չաթուան ընթացքին»:

Պաքուի մէջ նաեւ գոհունակութեամբ ընկալած են այն հանգամանքը, որ «դատարանը մերժած է Ղարաբաղի տարածաշրջանին ատրպէյճանցի զինուորներու եւ իրաւապահներու դուրսբերման անհիմն եւ անհեթեթ պահանջը»:

Հոկտեմբեր 12-ին Հայաստանի կառավարութիւնը դիմած էր միջազգային դատարանին՝ խնդրելով միջանկեալ միջոց կիրառել Ատրպէյճանի դէմ, որ վերջինս հրաժարի «որեւէ գործողութենէ, որ ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն ուղղուած է մնացած հայերը Լեռնային Ղարաբաղէն տեղահանելուն»:

«Դատարանի որոշումը կ'ընդունի նաեւ այն քաղաքականութիւնը, որ որդեգրած է Ատրպէյճանը Ղարաբաղի հայ բնակիչներուն հանդէպ: Պաքուն պատրաստ է ապահովելու տարածաշրջանի բոլոր քաղաքացիներուն պաշտպանութիւնը՝ անկախ անոնց ազգային պատկանելիութենէն», նշուած է Ատրպէյճանի ԱԳՆ յայտարարութեան մէջ:

Ատրպէյճանը կ'ողջունէ Արդարադատութեան Միջազգային Դատարանի՝ Լեռնային Ղարաբա-

Ատրպէյճանի դիւանագիտական գերատեսչութիւնը նաեւ կը պնդէ, որ «Ատրպէյճանը երբեք չէ արտաքսած Ղարաբաղի հայերը: Այդ անոնք էին, որ չնայած Պաքուի՝ տարածաշրջանը չլքելու կոչերուն, որոշեցին տեղափոխուիլ Հայաստան»:

Ատրպէյճանը Հրաժարում է

Շարունակուած էջ 2-էն

Ատրպէյճանն ինչ որ էր երբէլ արեւմտեան բանակցային ձեւաչափեր: Ամերիկեան կողմի մօտ կար այն համոզմունքը, որ Պաքուն Մոսկուայի հետ բաւականին բարդ ու բացմաշերտ յարաբերութիւններ ունի եւ այդ հանգամանքը ստիպելու է Ատրպէյճանն ի իշխանութիւններին ի վերջոյ վերադառնալ արեւմտեան հարթակներ: Սակայն վերջին օրերի զարգացումները ցոյց տուեցին, որ առնուազն այս փուլում Ալիեւը հակուած չէ յետքայլ կատարել եւ պատրաստ է նոյնիսկ Ուաշինկթոնի հետ հրապարակային լեզուակռուի մէջ մտնել:

հաւանականութիւն, որ Ատրպէյճանն արագապաշտ կարող է սահմանափակ ծաւալների սահմանային սրացում նախաձեռնել՝ նպատակ հետապնդելով Հայաստանին ստիպել իր համար նախընտրելի բանակցային ձեւաչափերը ընդունել: Արցախի էթնիկ գտումից յետոյ Ատրպէյճանն ի համար լուրջ հետեւանքների բացակայութիւնը, Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւններում խորացող ճգնաժամը, ինչպէս նաեւ նոր միջազգային ճգնաժամերի պատճառով Արեւմուտքում ի յայտ եկած ռեսուրսների սղութիւնը, կարող են այս սցենարը աւելի գայթակղիչ դարձնել Պաքուի համար:

Արդարեւ, ի՞նչ արդիւնքներու հասաւ այս յանձնաժողովը, կամ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցիին յարաբերութիւններուն առնչող հարցերով ան ինչպիսի՞ օրինակարգ մը կրցաւ ապահովել՝ դժուար է ըսել: Այսօր մէկ իրողութիւն կարելի է հաստատել, որ պետութիւն եւ Եկեղեցի փոխյարաբերութիւնները, նաեւ գործակցութիւնը կը գտնուին ամենավատ եւ լարուած վիճակի մը մէջ: Դժբախտաբար, Հայաստանի մէջ ստեղծուած արտաքին եւ ներքաղաքական պառակտուած կացութիւնը եւ Արցախեան Բ. պատերազմին չարաբաստիկ աղէտը միանգամայն չնպաստեցին պետութիւն եւ Եկեղեցի յարաբերութիւններու կայացման, այլ

ընդհակառակը՝ ստեղծեցին խիստ լարուած, չըսելու համար «թշնամական» իրավիճակ մը:

Պարագան ինչ ալ ըլլար, արդեօք կաթողիկոսը Արցախեան 44օրեայ պատերազմին վերջ դրած զինադադարէն գրեթէ ամիս մը ետք՝ 8 դեկտեմբեր 2020 թուականին, պէտք է պահանջէր ՀՀ վարչապետին հրաժարականը: Մի՞թէ ան ունի նման իրաւալիազօրութիւն մը, որ արձանագրուած է ՀՀ սահմանադրութեան կամ թէկուզ Եկեղեցական որեւէ կանոնագիրքի մը մէջ: Ըսել, թէ հայրենիքի եւ հայ ժողովուրդի գոյութեան վերաբերող հարցեր Եկեղեցիին եւ անոր ընդմէջէն Եկեղեցու վերնախաւին կամ ուղղակի կաթողիկոսին ալ կը վերաբերին՝ բաւարար չէ: Նման պատասխանատու քայլ մը պէտք է անպայման օրինական հիմք ունենայ, որուն համար գոյութիւն ունին ՀՀ նախագահ, Հայաստանի Ազգային ժողով, ժողովրդավարական կարգեր, ընտրութիւն կազմակերպելու եւ ատոր միջոցաւ Հայաստանի քաղաքացի-

Շար.ը էջ 15

Գոհաբանութեան Տօնին Նշանակութիւնը

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Ամէն տարի, Նոյեմբեր ամսուան չորրորդ Հինգշաբթին, Ամերիկայի Միացեալ Նահանգները Գոհաբանութեան Օրը կը տօնէ մեծ շուքով:

Պատմականօրէն, Ամերիկայի Գոհաբանութեան Օրուան ծագումը ետեւ կ'երթայ մինչեւ 1621 թուականը երբ Անգլիոյ կրօնական հալածանքներէն փախչող Պանդուխտ Հայրերը կը հաստատուէին Ամերիկայի Մենչեսթըր նահանքի Փլիմութ Գիւղաքաղաքին մէջ:

Սոսկալի ձմեռ մը բոլորելէ ետք, երբ 1621 ամառը հասաւ՝ յուսոյ ծիածանը պարուրեց անոնց հոգիները: Նոր հունձքը ցնծութեան առիթ մըն էր: Կառավարիչ Ուիլիամ Պրէստոնը հրահանգեց, որ Պանդուխտ Հայրեր՝ երեք օր ցնծութեան եւ առ Աստուած երախտագիտութեան խրախճանքով մը ողջունէին իրենց առաջին հունձքը՝ իրենց նոր երկրին մէջ: Բայց Ամերիկայի առաջին Գոհաբանութեան տօնը պաշտօնապէս հռչակուեցաւ Կառավարիչ Պրէստոնի կողմէ, Յուլիս 30, 1623 թուականին: Այդ թուականին նախորդող օրերը, այդ փոքր համայնքի այդ մարդիկ իրենց որսացած վայրի սագերն ու բազրեր բերին, իրենց դրացի հնդիկները իրենց հնդկահաւերը նուիրեցին, կիներն ու իրենց զաւակները այդ որսերէն համադամ ճաշեր պատրաստելով՝ սքանչելի տօնախմբութեան եւ խրախճանքի օր մը ունեցան:

Պանդուխտ Հայրերու համար այդ օրը կերուիտութեան եւ խրախճանքի օր մը ըլլալէն աւելի գոհաբանութեան եւ առ Աստուած շնորհակալութեան առիթ մըն էր: Ա՛յս էր սկզբնաւորութիւնը Ամերիկայի Գոհաբանութեան Տօնին:

Այնուհետեւ, երբ ամերիկայի Միացեալ Նահանգները ազատ եւ անկախ պետականութիւն դարձաւ, Հանրապետութեան առաջին Նախագահ ձորձ Ուաշինկթըն Նոյեմբեր 26, 1789-ը հռչակեց որպէս Երախտագիտութեան օր՝ ի յիշատակ Պանդուխտ Հայրերուն, որ այդ թուականէն շուրջ 166 տարի առաջ տօնած էին առաջին Գոհաբանութեան Օրը: Այդ թուականէն մինչեւ 1850-ական տարիներուն Գոհաբանութեան Օրը թէեւ կարգ մը նահանգներու մէջ կը տօնուէր, բայց ազգային տօն մը չէր:

Գոհաբանութեան Օրը Ամերիկայի ազգային պաշտօնական տօն դարձաւ 1863 թուականին՝ երբ այդ տարիներու երկրին մեծանուն նախագահ Աբրահամ Լինքըն՝ Նոյեմբերի վերջին Հինգշաբթի օրը հռչակեց որպէս երախտագիտութեան տօն: Ատկէ ետք, 75 տարիներ շարունակ բովանդակ Ամերիկայի քաղաքացիները այդ տօնը տօնեցին մինչեւ 1939-ին երբ նախագահ Ֆրանքլին Ռուզվելթ՝ Գոհաբանութեան Օր-ուան թուականը փոխեց Նոյեմբերի չորրորդ Հինգշաբթիին եւ 1941-ին Ամերիկայի Գոնկրէսը վաւերացուց նախագահ Ռուզվելթի որոշումը: Այնուհետեւ, Ամերիկայի Միացեալ Նահանգները Նոյեմբերի չորրորդ Հինգշաբթիին կը տօնեն Գոհաբանութեան Օրը, որ անտարակոյս Ամերիկայի ամենէն ժողովրդական տօնն է:

Դժբախտաբար, սակայն, շատ մը ամերիկացիներու համար Գոհաբանութեան Օրը սոսկ ընտանե-

կան համախմբումի եւ կերուիտութի օր մըն է: Շատեր մոռցած են այս տօնին ծագումը, պատմական նշանակութիւնը եւ բարոյական իմաստը: Ուրիշներ չեն գիտեր թէ՛ ի՞նչ կը նշանակէ գոհաբանութիւնը կամ երախտագիտութիւնը, թէ՛ երբ եւ ինչպէս մէկը իր շնորհակալութիւնը յայտնելու է: Ահաւասիկ քանի մը նշմարներ այդ մասին.

Առաջին, Գոհաբանութեան Օրը իր ծագումով եւ իր ոգիով կրօնական օր մըն է: Պանդուխտ Հայրերը ծնունդ տուին այս տօնին իրենց սրտի երախտիքը յայտնելու Աստուծոյ՝ Անոր նախախնամական առաջնորդութեան համար: Անոնք իրենց գոհունակութիւնը յայտնեցին Աստուծոյ, որ սաստիկ ձմեռ մը անցնելէ ետք՝ իրենց բարեբեր հունձք մը տուած էր եւ հնարաւոր դարձուցած էր իրենց կեանքը օտար այս ամերիկայի հեռու իրենց հայրենիքէն եւ ազգակիցներէն: Պանդուխտ Հայրերը գոհաբանութեան արարքով կը վկայէին իրենց՝ Աստուծոյ կախեալ ըլլալու գիտակցութիւնը, թէ՛ ամէն ի՞նչ որ ունէին նոյնիսկ իրենց համեստ տնտեսական պայմաններու մէջ, ինչ որ էին եւ ինչ որ կը յուսային ըլլալ՝ կը պարտէին միայն ու միայն Տէր Աստուծոյ: Արդեօք ժամանակակից միջին ամերիկացին որչա՞փով գիտակից է իր նախնիքներուն կրօնական եւ հոգեւոր ժառանգութեան: Քանի՞ ամերիկեան քաղաքացի Պանդուխտ Հայրերու ոգեկան զգացումներով կ'ապրի, այսինքն, երախտագէտ է եւ բանիւ ու գործով իր շնորհակալութիւնը կը յայտնէ իր Արարիչին:

Երկրորդ, Գոհաբանութեան Օրը-ը առիթ մըն է յիշելու թէ երախտագիտութիւնը կախում չունի կեանքի արտաքին պայմաններէն, այլ ան ներքին առողջ հոգեվիճակի մը արգասիքն է: Անհատի մը երախտագիտութեան չափանիշը իր վայելած բարիքները չեն, ու իր ունեցած նիւթական շօշափելի հարստութիւնը չէ: Շնորհակալութեան զգացումը պայմանադրական չէ, ան ոչ մէկ ձեւով կախեալ է մէկու մը կեանքի առատ վայելքներուն հետ: Դէպի անցեալ հայեացք մը միայն Ամերիկայի առաջին Գոհաբանութեան Օր-ուան պարագաներուն վրայ բաւական պիտի ըլլայ համոզել, որ Պանդուխտ Հայրերու գոհաբանութիւնը ոչ մէկ աղերս ունէր իրենց ունեցած շօշափելի եւ քանակական հարստութեան կամ բարօրութեան հետ: Անոնք ամէնէն մէկ իսկ երախտագարտ էին իրենց կեանքին եւ ունեցածին համար:

Ժամանակակից միջին ամերիկացիին աշխարհահայացքը բոլորովին հակոտնեայ է Պանդուխտ Հայրերու կեանքի փիլիսոփայութեան: Ան ունենալու, աւելի ունենալու եւ ամէնէն աւելի ունենալու իր խոյ արշաւին մէջ՝ մոռցած է նոյնիսկ գոհաբանութեան եւ շնորհակալութեան իմաստն ու կարեւորութիւնը:

Երրորդ, Գոհաբանութեան Օրը-ը առիթ մըն է նաեւ զգաստացնելու մեզ թէ՛ չարտայայտուած գնահատանքն ու երախտագիտութիւնը ընդունանքն: Ի՞նչ օգուտ եւ արժէք ունին բարեհաճ բայց չարտայայտուած իղձեր, զգացումներ եւ խորհուրդներ...: Զգացումներ եւ գաղափարներ իմաստային կը դառնան երբ կը վերածուին արտայայտութիւններու եւ հոսկ

Զգուելի Աշխարհ

ՍԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Վրդոված եմ մեզ յուսախափ ըրած Ռուսիոյ լարախաղաց կեցուածքէն:

Վրդոված եմ Ուքրանիոյ տրուած Արեւմուտքի անվերապահ աջակցութենէն:

Վրդոված եմ Ռուսիոյ եւ Ար?մուտքի՝ Թուրքիոյ հետ ունեցած սիրաբանութենէն:

Վրդոված եմ եկեղեցականներու կողմնակալ քաղաքականութիւն խաղալէն:

Վրդոված եմ մեզի պարտութիւն բերած մարդոց յոխորտագին բարբառելէն:

Վրդոված եմ տիտղոսաւոր հայերու «պէտք է որ» ըսելով յօղուածներ գրելէն:

Վրդոված եմ անհաւասար ուժերով կռուիլ պահանջողներու «հերոսութիւններէն»:

Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող աշխարհի երկու նժարով դիրքորոշուելէն:

Վրդոված եմ տեղահանուածներու թշուառութիւնը կանխել չուզող աշխարհէն:

Վրդոված եմ պետութեան ներկայացուցիչ յարգել չգիտցող երիտասարդներէն:

Վրդոված եմ ինքնապաշտպանութեան անունով մանուկ ու ծեր սպաննողներէն:

Վրդոված եմ ցեղասպանուածի կողմէ ուրիշը ցեղասպանութեան ենթարկելէն:

Վրդոված եմ ցեղասպանողի կողմէ ուրիշին բարոյագիտութիւն սորվեցնելէն:

Զգուելի աշխարհ:

Վրդոված եմ քաղաքակրթութեան բարիքներով եւ միջազգային օրէնքներով հանդէս եկող մարդոց շահախնդիր ու շնափառ կողմնակցութիւնը դիտելէն:

Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող այն աշխարհէն, որ կուտայ Քոստովոյին ինքնորոշման իրաւունք (self determination) եւ այդպիսի իրաւունք չ'ուզեր տալ արցախահայութեան:

Զգուելի աշխարհ:

Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող աշխարհէ մը, որ Պաղեստինի մէջ ժողովուրդ մը ամբողջ անարդարօրէն բանտի մէջ պահուած տեսնելը ընդունելի կը գտնէ եւ բանտապահին անմարդկային բարբարոսութիւնները ինքնապաշտպանութիւն (self de-

fence) կը նկատէ:

Զգուելի աշխարհ: Ներելի է Համասներ ու Հրգպալլաներ ահաբեկիչ նկատել, բայց ներելի չէ Խարայէլը ահաբեկիչ պետութիւն սեպել:

Արդեօք Արեւմուտքը չի՞ գիտեր, թէ Պըն Լատիններ, Համասներ եւ Հրգպալլաներ կը ծնին ի հետեւանք այն բռնութիւններուն եւ ճնշումներուն, որ կը կիրարկեն իրենք եւ իրենց ծնունդ Խարայէլը:

Զգուելի աշխարհ:

Վրդոված եմ մարդս իրեն նման մարդուն վրայ ինքզինք գերադաս նկատելէն:

Վրդոված եմ զոհն ու ոճրագործը նոյն կշիռով կամ հաւասար նկատողներէն:

Վրդոված եմ ուրիշին գոհունակութիւնը չարաչար օգտագործող սմսեղուկներէն:

Վրդոված եմ անտառի օրէնքով գործող փողկապակիր մարդակերներէն:

Զգուելի աշխարհ:

Ինչո՞ւ Արեւմուտքին ներելի է Քոստովոյ անկախ դարձնել եւ նոյն անկախութեան արժանի Արցախը իր ժողովուրդէն բռնահանուած դարձնել:

Ինչո՞ւ Ռուսիան Ուքրանիոյ մէջ Տոնպասի եւ Տոնցքի ոռոսներուն փրկութեան ձեռք երկարելու պատերազմ պիտի հռչակէր եւ Արցախի հայերուն նման բան պիտի չ'ընէր՝ օգնելով իր դարաւոր բարեկամ ու փոքր եղբայր Հայաստանին, որ Արցախը փրկուէր:

Զգուելի աշխարհ:

Ինչո՞ւ հայրենասիրութիւն խաղացողները Փաշինեանը կը մեղադրեն անտեղի պատերազմ հրահրելուն համար՝ իր «Արցախը Հայաստան է ու վերջ» ըսած ըլլալով, եւ չեն մեղադրեր իրենց գլանին պատկանող բարձրաստիճան շեֆերը մեր բանակին, որոնք խաբեցին գինք երկու օրէն Պաքուն գրաւելու մեծ խօսիկութեամբ:

Միթէ նոյնը չէ՞ր պարագան Եգիպտոսի նախագահ Նասերին, որ պատերազմի գնաց Խարայէլի դէմ՝ վստահելով գինք խաբող մարաշխատ Ամերի թոյլ բանակին:

Զգուելի ու հազար անգամ զգուելի աշխարհ:

գործնական տեսանելի եւ շօշափելի արարքներու: Զարտահայտուած երախտագիտութիւնն ալ երախտագիտութիւն չէ:

Առիթով մը Յիսուս տասը բորոտներ բժշկեց: Վստահաբար անոնցմէ ամէն մէկը իր սրտին մէջ գոհունակ էր եւ հաւանաբար ալ երախտագիտութեան զգացումներ կը տածէր, բայց տասը բժշկուած բորոտներէն միայն մէկը իր շնորհակալութիւնը յայտնեց իր բարեգործ բժիշկ Յիսուսին: Մնացեալ իննը գործնապէս ապերախտ նկատուեցան, փոյթ չէ թէ իրենց սրտերուն մէջ երախտագէտ եղած ըլլային:

Հարց կը ծագի, սակայն, թէ մարդիկ ինչպէ՞ս կրնան իրենց երախտագիտութիւնը գործնապէս արտայայտել:

Դարեր առաջ, Պաղեստինցի


Սաղմոսերգուն ինքն ալ այդ հարցումը կը հարցնէր. «Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը՝ իր ինծի ըրած բարութեան համար» (Սաղմ. 116.12): Ապա, ինքն իր հարցումին պատասխանը կու տար երեք արտայայտիչներով - խօսքով, գործով եւ տալով:

Առաջին, իր երախտագիտութիւնը կ'ուզէր արտայայտել խօսքով. «Տիրոջը անունը պիտի կանչեմ»...

Երկրորդ, գործով, «Տիրոջը պիտի ծառայեմ»... Երրորդ, Տալով, «Իմ ուխտերս Տիրոջ պիտի հատուցանեմ»...:

Այս երեք միջոցներով - խօսք, գործ եւ տալով - գործնական եւ ազդեցիկ արտայայտութիւններ են

Տարեկից Երկու Ստաւորակաճներու



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Տարեկից երկու հանճարեղ մտաւորականներ ինկան միասին, անցեալ Նոյեմբերի նոյն շաբթուն, Մարգարեա Մարկոսեանը հոս Գալիֆորնիա եւ ժիրալը Դանիէլեանը քիչ մը անդին Պոսթոն, երկուքն ալ, ժիրալը հալ մտաւորականութեան ռահվիրայի, եւ Մարգարեա միջազգային գիտութեան բարձրագոյն գինը վճարելէ ետք, ետին ձգելով ցաւ եւ կսկիծ, ահաւոր եւ անփոխարինելի բացակայութիւն մը: Երկուքն ալ ճանչնալու երջանկութիւնը ունեցալ, մանաւանդ Դոկտոր Մարգարեա, ինք Թոմարգացիի գաւակ, ու ես էվէրէկցիի, շատ մօտիկ հայրենակիցներ: Իր անուշ ժպիտով Թոմարգան քիպարացնելով Մարգարեա կ'ըսէր թէ Մամնդաւ աւանն էր:

Ժիրալըին հետ Woodbury համալսարանէն հրաւիրուած էինք բա-

նախօսելու հայերէն առաջին գիրքի եւ Աստուածաշունչ Մատեանի (1666) տպագրութեանց յոբելեաններուն առիթով (1512-2012) Արեւմտեան մեր Թեմի յանձնարարութեամբ: Միակ հանդիպումս եղաւ: Բանախօսեց եւ իմ բանախօսութեան աւարտին այնքան բծախնդիր նկատողութիւն մը ըրաւ: Կ'ըսէր թէ հայերէն գիրքերու տպագրութեան ռահվիրան Յակոբ Մեղապարտն էր որ իր տպագրած առաջին վեց գիրքերէն մէկուն «Պատարագատետր»ի վերջաւորութեան երկու տող չիշատակարան մը թողած էր ուրկէ միայն, եւ միայն այնտեղ կը ստուգուէր Մեղապարտի անունն ու առաջին տպագրութեան վայրն ու թուականը՝ Վենետիկ, 1513:

Ժիրալը Հարցուց ինծի թէ ո՞վ գտած էր այդ երկտող չիշատակարանը եւ յայտնաբերած: Մանրամասնութեանց մէջ մանրամասնութիւն մը որուն Դանիէլեան ինք

միայն տեղեակ էր: Ըսաւ Երուսաղէմի միաբաններէն Լուսարարապետ Սահակ Եպիսկոպոս Խապայեան, յետագային Սահակ Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ԺԹ դարու ութսունական թուականներուն կարգացած էր չիշատակարանը եւ առաջին անգամն ըլլալով յայտնաբերած այդ կարեւոր տեղեկութիւնը: Ժիրալը Դանիէլեան մեծ մատենագէտէն սորվեցալ տողատակի այդ յայտնաբերումը:

1969-ի ամրան Մարգարեա Մարկոսեան յանակնկալս Ֆիլատելֆիոյ Սուրբ Երրորդութիւն նորաշէն եկեղեցոյ գրասենեակէս ներս կը մտնէր «Լոյս լուսոյ մայր» շարականի երգակցութեամբ, եւ ճակտին զինք աւելի անուշցնող եւ ինքնատիպ դարձնող սեւ մագերու խուրձով: Զարմացալ: Այդ գողտրիկ շարականը գիտե՞ս թէ երբ կ'երգենք, հարցուցի: Այո ըսաւ, Աւագ Հինգշաբթիի խաւարման գիշերը:

Գիտէի որ Փենսիլվանիոյ նահանգային համալսարան կ'ուսանէր, Ֆիլատելֆիոյին հետու նահանգին կեդրոնական շրջանին մէջ, սակայն չէի գիտեր շարականներու մասին իր ջերմաստիճանը մինչեւ այն ատեն երբ կարդացի իրեն պատանեկան ընկեր այժմ Նորվան Արքեպիսկոպոս Զաքարեանի սրտառուչ մահախօսականը: Սրբազանը նախկին անունով Արմէն, մեր օրերու Դպրեվանքի փայլուն ուսանողներէն մին եղած է ու երկար տարիներու հոգեւոր ծառայութիւն մատուցած Ֆրանսայի մէջ որպէս թեմակալ Առաջնորդ: Մարգարեա ըսաւ թէ այցի եկած էր եւ նուէր մը ունէր տալիք:

Քեզի պիտի տամ իմ Master's Degree-ն, ըսաւ: Ինչու համար քու վաստակածդ ուրիշին պիտի տաս, ես

հատ մը ունիմ արդէն Temple համալսարանէն, ըսի: Այս շաբաթ PhD աստիճանը ստացալ, այնպէս որ նախորդները կրնամ բաժնել, ըսաւ: Սրտագինս կը շնորհաւորեմ ըսելով ողջագուրուեցանք: Զինք յաճախ կը տեսնէի արեւելեան ափին: Երբ Գալիֆորնիա փոխադրուեցանք աւելի մօտ եղանք: Անգամ մը բանախօսեց Կլէնտէյլի պետական գրադարանի սրահին մէջ ուր անպայման ներկայ եղայ: Հոյակապ բանախօսութիւն: Յետոյ կամացուկ մը ըսի Մարգարեաին իմ լաւագոյն տպաւորութիւնը, եւ թէ քիչ մը կարճի կրնար կապել:

Մեր սիրելի եւ յարգելի զոյգ մը կորուստներու մասին շատեր գրեցին ամենուրեք, Նորվան Սրբազան եւ յատկապէս Մարգարեաին «գուրգուրացող» քոյրը Մեղա Խոշեանը, ինչպէս կարդացի գիրքին նախաբանին մէջ: Արժան եւ իրաւ: Հիանալի արժեւորումներ են բոլորը: Շատ աւելին քան մահախօսականներ: Յուզիչ է Սեղա Խոշեանի այնքան հարազատ ու հայերէն լեզուի նկատմամբ բարձրագոյն դիրքերէն սիրտ համառող գրութիւնը իր եղբօր մասին:

Սեղա Խոշեան ի միջի այլոց այս յատկանշական խօսքերը կ'ըսէր եղբօր մասին: «Հաղորդուեցար մեր շարականներու դիւթանքով եւ կենսաւորուեցար մեր հայրապետներու պատգամներով ու մնացիր հաւատքիդ մէջ ու Հայ Եկեղեցոյ հանդէպ ժայռի պէս ամուր»:

Նուագ սրտառուչ չէ նաեւ Նորվան Արքեպիսկոպոս Զաքարեանի յուշերն ու պատանեկան եկեղեցի երթն ու դարձը, նոյնպէս գրուած բացառիկ եւ ինքնատիպ ու հարազատ ոճով: Շատ ուսանելի են նաեւ Երուսաղէ

Շար.ը էջ 15

ԱՆՎՃԱՐ

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ՕՐԻՆԱԿԱՆՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԵՐ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ, ԿԱՃԱՌԻ
ԵՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ
ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՔՈՒԵՃՆԵՐՈՒՆ ՄԷՋ

SERVICIOS MIGRATORIOS
SIN COSTO

**PARA ESTUDIANTES, FACULTAD,
Y PERSONAL EN LOS
COLEGIOS COMUNITARIOS
DE CALIFORNIA**

ԴԻՐԱՒ ԴԱՍԱՌՈՐԵՅԷ ՁԵՐ ԱՌԱՋԻՆ ԺԱՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌՑԱՆՑ՝ ՊԱՏՃԵՆԱԳՐԵԼՈՎ (SCANNING) ԱՅՍ ԾԱՃԱԿԱԳԻՐԸ ՁԵՐ
ՀԵՌԱԶԱՅԻՆ ՏԵՍԱՌՑԻԿԻ «ԷՓՈՎ ԿԱՍ ԵՐՈՒԼՈՎ»

FINDYOURALLY.COM

Programa tu primera cita fácilmente en línea
escaneando este código con la aplicación de
la cámara de tu celular o visitando:

FINDYOURALLY.COM

«Կոմիտաս»ի Թատերա-Երաժշտական Ներկայացումները Իզմիրի Եւ Անգարայի Մէջ



Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին կ'իմանանք թէ քաղաքի «Նուճուկ» թատերախումբը՝ շաբաթավերջին «Կոմիտաս» թատերա-երաժշտական ներկայացումը բեմադրեց Իզմիրի մէջ: Այս ծրագիրը՝ որ Լուսաւորիչ երգչախումբի մասնակցութեամբ յառաջ կը տարուի տարիներէ ի վեր, արձանագրած է աննախընթաց յաջողութիւններ:

Իզմիրի մէջ եւս գեղարուեստասէրները մօտիկ հետաքրքրութիւն ցոյց տուին «Կոմիտաս»ի նկատմամբ: Սոյն ձեռնարկը տեղի ունեցաւ Քարշըքաքայի մէջ կազմակերպուած փառատօնի ծիրէն ներս: Այսպէս՝ Պոսթանձըի «Սուստ թաշէլ» թատերասրահի երգիքին տակ ստեղծուեցաւ բարձր տրամադրութիւն: Արդարեւ, խմբավար Յակոբ Մամիկոնեանի մականին ներքեւ Լուսաւորիչ երգչախումբի անդամները, յաջողութեամբ գործադրեցին յայտադրի երաժշտական բաժինը: Հարկ է նշել որ երգչախումբի անդամները, միօրեայ այցելութեան ձեւով Իզմիր մեկնեցան ու վերադարձան:

Մինչ այդ գոհունակութեամբ կը տեղեկանանք, որ յառաջիկայ Երկուշաբթի, Նոյեմբերի 27-ին ալ, «Կոմիտաս» պիտի կրկնուի Անգարայի մէջ: Ելման գիւնէջ» թատերասրահի երգիքին տակ նախատեսուած ձեռնարկը պիտի բնորոշ փառատօնի մը փակումը: Տոմսերն արդէն սպառած են: Լուսաւորիչ երգչախումբը իր տասն հոգինոց կազմով, պիտի մեկնի Անգարա եւ պիտի իրականացնէ երգեցողութիւնները, Յակոբ Մամիկոնեանի մականին ներքեւ:

Հեռախօսագրոյցի ընթացքին, Յակոբ Մամիկոնեան մեզի յայտնեց որ Իզմիրի մէջ կայացած ձեռնարկէն բաւարարուած են: Իսկ Անգարայի պարագային ալ բոլոր տոմսերն այժմէն վաճառուած ըլլալը կը յուսարէ գիրենք: Մամիկոնեան նշեց թէ, միջոցներու սղութեան պատճառով, երգչախումբի անդամները փոքր խումբերու բաժնուելով, կը մասնակցին քաղաքէն դուրս տեղի ունեցած ձեռնարկներու երգեցողութիւններուն եւ յանուն արդարութեան, այդ անդամները կ'ընտրուին հերթափոխութեամբ:

Մալաթիոյ Հայրենակցական Միութեան Տարեդարձի Ընթրիքը

Պոլսոյ «Պէգճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ Մալաթիոյ հայրենակցական Միութեան հիմնադրութեան 13րդ տարեդարձի տարեկան ընթրիքը, որուն ընթացքին ստեղծուեցաւ ոգեւոր մթնոլորտ: Երեկոյթի պատուոյ հիւրն էր Թուրքիոյ Հայոց պատրիարք Ամեն. Տ. Մահակ Արք. Մաշալեան: Ներկայ էին նաեւ Կաթողիկէ Հայոց վիճակաւոր Տ. Լեւոն Արք. Զէքիչեան եւ բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ:

Մալաթիոյ հայրենակցական միութեան վարչութեան ատենապետ Կարապետ Օրունեօզի գեկոյցնէն յայտնի եղաւ որ 6

Փետրուարին պատահած ահաւոր երկրաշարժին մեծապէս տուժած է Մալաթիան, որուն հետեւանքով վարչութիւնը շարժման անցած է ազիտեալներու կարիքներուն հասնելու համար: Ներկայիս Մալաթիոյ մէջ կ'ապրին 12 հայ ընտանիքներ, որոնց համար Միութիւնը ամէն ճիգ կը գործադրէ, որպէսզի անոնք չի տեղափոխուին: Առ այդ Միութիւնը որոշած է ժամանակաւոր բնակարաններ կառուցելով լուծել աղէտեալներու կեցութեան հարցը:

Աւարտին Պատրիարք Հայրն արտասանեց իր օրհնութեան խօսքը:

Վարդասայլը Գնմարանի մէջ



13 Նոյեմբեր 2023, Երկուշաբթի օր, Փասատենա քաղաքի Վարդասայլերու Տողանցքի (Pasadena Rose Parade) հայկական սայլի ընկերակցութեան նախագահ եւ համահիմնադիր Արթուր Քոքոզեանը այցելեց նոյն քաղաքի Հայկական ձեմարանը: Հիւրը դպրոցի ճաշարահի մէջ հաւաքուած աշակերտներուն նախ լուսանկարներով ներկայացուց անցած տարիներու հայկական վարդասայլերը, ապա բացատրեց իր ընկերակցութեան նպատակը, թէ ամանօրեայ այս փառատօնը հայկական մշակույթին կու տայ համաշխարհային ճանաչում, քանի որ 100է աւելի երկիր կը սփռէ անոր հաղորդումը:

Հայկական վարդասայլի ընկերակցութիւնը արդէն կառուցած է 1 Յունուար 2024 թուականի տողանցքի շքեղ վարդասայլը: Ան պիտի ներկայացնէ մայրական սէրը եւ հայկական երաժշտութեան տոհմիկ նուագարանները: Պարոն Քոքոզեանը բացատրեց, թէ հակառակ անոր որ վարդասայլը ծախսալից հաճոյք է, սակայն այդ ներդ-

րումը արդարացուած է, քանի որ թէ՛ հայկական արժէքները գունագեղ ձեւով կը ներկայանան աշխարհին, եւ թէ՛ հայ պատանիներ կազանդի նախօրեակին կամաւոր աշխատանքով կը զարդարեն վարդասայլը եւ կը ծանօթանան հայկական մշակույթին՝ կը սորվին միասնական աշխատանքի արժէքը:

Աշակերտներուն հարցումներուն պատասխանելով, Պարոն Քոքոզեանը նաեւ բացատրեց, թէ ծաղկասայլի վրայ արտօնուած չէ ներկ գործածել. բոլոր գոյները պէտք է որ ծաղիկներէ, տերեւներէ կամ հունտերէ ձեռք բերուած ըլլան:

Պրն. Քոքոզեանը քաջալերեց, որ Հայկական ձեմարանի հասուն տարիքի աշակերտները անպայման մաս կազմեն այս տարուայ ծաղկասայլը զարդարելու հաճելի աշխատանքին: Յէն 6 ամիս տեւող այդ գործը երբ իր աւարտին կը հասնի, ու երբ այդ գեղատեսիլ կառքը հանդիսաւորկերպով սահի Քոլորադոյի պողոտայէն՝ պատիւ եւ ուրախութիւն պիտի բերէ ամբողջ հայութեան:

Հաղորդագրութիւն՝ դպրոցէն

Clothing Drive
DONATE NEW CLOTHING FOR ARTSAKH FAMILIES
Preferably for Children

In Unity is Strength
DROP OFF BY NOV 15

AGBU
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
WESTERN REGION

2495 E Mountain St
Pasadena, CA 91104
Mon- Sat 9am-5pm
(626)794-7942

6844 Oakdale Ave
Canoga Park, CA 91306
Mon- Fri 8am-4pm
(818)883-2428

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

Տոքթ. Մհեր Պապեան
Ատամնաբոյժ

1111 S. Glendale Ave., Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Fax: (818) 547-9360

Պետութիւն եւ Եկեղեցի

Շարունակուած էջ 11-էն

ներուն կամ քը արտայայտելու օրինակարգ եւ այլն: Հարց պէտք է տալ՝ Հայաստան կը ներկայացնէ բացարձակ միապետութիւն մը, կրօնապետութիւն մը, թէ, իր բոլոր թերութիւններով հանդերձ, սահմանադրական պետութիւն մը: Կը կասկածիմ, եթէ եկեղեցին հոգեւոր-բարոյական ոլորտէն բացի՝ իրաւասութիւնը ունենայ վերոնշեալ օրինաչափութենէն վեր ինքզինքին վերապահելու գոտի քաղաքական հանգամանք ունեցող լիազօրութիւն մը:

Եկեղեցիին հեղինակութիւնը միանշանակ հոգեւորբարոյական հանգամանք ունի՝ «սէր սերմանելու հոն, ուր ատելութիւն կայ, ներում չնորհելու հոն, ուր վիրաւորանք կայ, միութիւն բերելու հոն, ուր տարակարծութիւն կայ, ճշմարտութիւն բացայայտելու հոն, ուր սխալ կայ, հաւատք ներշնչելու հոն, ուր կասկած կայ, յոյս տալու հոն, ուր յուսահատութիւնը կ'ընկճէ, լոյս սփռելու հոն, ուր խաւարը կ'իշխէ, մխրթարութիւն բերելու հոն, ուր տրտմութիւնը արցունք կը քամէ»:

Եկեղեցին կուսակցութիւն մը չէ, որ կողմ բռնէ: Կաթողիկոսը զգուշ պէտք է ըլլայ կամայ թէ ակամայ դառնալու կուսակցապետ մը: Կաթողիկոսին առաջին եւ կարեւորագոյն յատկանիշը իր հայկազուն հօտին հոգեւոր հայր ըլլալն է, անոր համար ալ ան կը կոչուի «հայրապետ»: «Հայր» եւ «պետ» գոյականներէն կազմուած այս բառակապակցութիւնը պէտք չէ սահմանափակել լոկ եկեղեցական հայրերուն պետը ըլլալու դրութեամբ, այլ բոլոր այն հաւատացեալներուն, որոնք անդամ կը նկատուին Հայց. առաք. սուրբ եկեղեցիին: Այլապէս ան կը կորսնցնէ իր գաւակներուն միջեւ հօր մը հաշտարար դերակատարութիւնը եւ ազգին կողմէ իրեն վստահուած արժանահաւատ բարձրագոյն հեղինակութիւնը:

Այսօրուան վիճակով, մեր շատ մը պակասներու կարգին, կարեւորագոյններէն մին՝ արժանահաւատ հեղինակութեան մը հաշտարար գործին եւ պատկառագողու խօսքին հական կարիքն ունէինք, ներքաղաքական պառակտուած եւ հակոտնեայ կիրքերէ հրկիզուած դաշտին վրայ հայրական սէր եւ գուրգուրանք ցօղելու: Այս առնչութեամբ ինչքան յատկանշական է, որ Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետին՝ Հռոմի պապին բարձրագոյն տիտղոսը՝ «pontifex maximus» է, որ բառին բուն իմաստով ոչ այլ ինչ՝ քան գերազանցապէս «ամենամեծ կամուրջ ստեղծող» կամ «ամենամեծ կամուրջ կառուցող»

կը նշանակէ: Իւրաքանչիւր ճշմարիտ հոգեւորական իր ծառայական առաքելութեան մէջ պէտք է, որ այս կոչումը կրէ, որպէս մարդկային յարաբերութիւններու մէջ կամուրջ կառուցող, հեռաւորութիւններ իրարու մօտեցնող, տարաբնոյթ բազմազանութիւններուն եւ այլազանութիւններուն մէջ միութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծող: Ներկայ ժամանակներու մեր իրականութեան մէջ այս կարեւորագոյն բացը լրացնելու հանգամանքն ու պատասխանատուութիւնը Ամենայն հայոց կաթողիկոսին վերապահուած էր, իբրեւ անկողմնակալ եւ կուսակցական հատուածականութիւններէ վեր՝ հաղորդակցութիւն եւ միութիւն ստեղծող հոգեւորբարոյական հեղինակութիւն մը: Դժբախտաբար, ան կորսնցուց այս բախտորոշ առիթը՝ առաւել քան սնանկացնելով եկեղեցիին քրիստոնէական առաքելութեան եւ ծառայական հեղինակութեան դարաւոր կայունութիւնը:

Պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւնները կարգաւորելու հարցով նաեւ պէտք է նկատի ունենալ այն կարեւորագոյն հիմնախնդիրներէն մէկը, որ բոլոր կրօնական կազմակերպութիւններն ու եկեղեցիները առանց բացառութեան, ներառեալ Հայց. առաք. սուրբ եկեղեցին, պէտք է անպայման ներգրաւուին հարկային դաշտին մէջ: Սակայն սոցը ծաւալուն եւ առանձին նիւթ մըն է, որուն հանդէպ այլազան մօտեցումներ ցուցաբերած են պետական մարմիններն ու եկեղեցին, եւ այս նիւթին շուրջ լայնօրէն անդրադարձած է հայ մամուլը: Բայց եւ այնպէս առկայ հիմնախնդիրը ցայսօր կարգաւորուած չէ, եւ այս ալ մեր շատ մը անորոշութիւններու շարքին վերջնական հանգուցալուծումի մը կը կարօտի:

Յաւարտ բանիս, կ'արժէ այստեղ անգամ մը եւս տալ հարցումը. ինչպէ՞ս է կարգաւորուած Հայաստանի Հանրապետութեան եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցիին միջեւ փոխյարաբերութիւնը: Փաստօրէն՝ պետութիւնը եւ եկեղեցին, ըստ ՀՀ սահմանադրութեան, իրարմէ անջատ են: Պետութիւնը կը ճանչնայ Հայ եկեղեցիին ունեցած բացառիկ առաքելութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին, առանձնապէս անոր դերակատարութիւնը ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործին մէջ, սակայն ցայսօր տակաւին ամենեւին ճշդուած չէ, թէ ի՞նչ օրինակարգով կամ ո՞ր օրէնքով կը կարգաւորուին Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ եկեղեցիին միջեւ յարաբերութիւնները:

(վերջ)

- (20) Նոյնը:
- (21) 2018 թուականէն ետք, 33 կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի (33 ԿԳՄՍ) նախարարութիւնը կը մշակէ բարեփոխումներու ծրագիր մը դպրոցական որոշ առարկաներու դասաւանդման վերաբերեալ: Համաձայն այս ծրագրին? Հայ եկեղեցւոյ պատմութիւնն առարկայի դասաւանդումը պիտի ներառուի, Հայոց պատմութիւնն առարկային մէջ: Կառավարութեան սոյն մտադրութիւնը կը գտնէ հանրային հանրային լայն արծագանգ մը, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այս հարցով կը դրսեւորէ իր անհամաձայնութիւնը: Առ այսօր, փոխադարձ համաձայնութիւն մը 33 ԿԳՄՍ նախարարութեան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ գոյացած չէ:
- (22) Բացի այն եկեղեցիներէն ու վանքերէն, որոնք 33 կառավարութիւնը կալուածային իրաւունքով վերադարձուցած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ինչպէս օրինակ? Հարբատն ու Սանահինը, մասնաւոր մը ուրիշ եկեղեցիներ ու վանքեր:
- (23) Նոյնը:
- (24) Տե՛ս <https://hraparak.am/post/64830078>
- (25) Նոյնը:

ԱՊՊՔԻՆՄԱՆ ՄԱՂՈԱՆՔ

«Մասիս» շաբաթաթերթի ընթերցողներին եւ Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամ ԳԱՆՈՒՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ վերջերս վերբուժական գործողութեան մը ենթարկուած է եւ այժմ կը բոլորէ ապաքինման շրջան մը: «Մասիս»-ի անձնակազմը շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ յարգարժան ընկերոջ:

Կեանքէն Հեռացաւ Ներսէս Պապայեան

Յաւով իմացանք որ Նոյեմբերի 8-ին, Նիւ Եորքի մէջ կեանքէն հեռացած է ծանօթ հրապարակագիր, հասարակական գործիչ եւ խմբագիր Ներսէս Պապայեան: Այս տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու մեր կառույցները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր քրոջ՝ փրոֆ. Սիլվա Գարայեանին, եղբօր՝ Արա եւ Սոնիա Պապայեաններուն ու բոլոր մերձաւորներուն: «Մասիս» Շաբաթաթերթ

Գոհարանութեան Տօնին Նշանակութիւնը

Շարունակուած էջ 12-էն

մէկու մը համար իր շնորհակալութիւնը յայտնելու Աստուծոյ, ինչպէս նաեւ մարդոց հանդէպ:

Գոհաբանութեան Օրը դիպուկ առիթ մըն է յիշեցնելու մեզի թէ՛ մեր երախտագիտութեան առաջին տուրքը տալու ենք արարիչ եւ կենարար Աստուծոյ, ոչ միայն տարուան մէկ օրը, այլ 365 օրերուն, որովհետեւ առանց Անոր մարդ արարածը ոչինչ է: Ան է կեանքին Տէրը եւ Պարգեւիչը՝ ամէն բարիքներուն եւ շնորհքներուն: Ան է, որ Տէր Յիսուս Քրիստոսով մեզի տուած է կեանք եւ առաւել կեանք:

Գոհաբանութեան Օրը նաեւ առիթ մըն է յիշեցնելու թէ՛ մենք նաեւ երախտագէտ ըլլալու ենք մարդոց, որոնք իրենց կեանքով եւ իրենց մատուցած ծառայութիւններով

բով ճոխացուցած եւ հարստացուցած են մեր կեանքը: Պահ մը եթէ նայինք այն բոլոր բարիքներուն - նիւթական, մտաւոր, մշակութային, բարոյական եւ հոգեւոր օրհնութիւններուն - պիտի անդրադառնանք, որ անոնք մեր ձեռագործը չեն, եւ ոչ ալ արգասիքը մեր մտաւոր եւ հոգեւոր երկունքներուն, այլ անոնք նուաճումներն ու ծառայութիւններն են մեզմէ առաջ ապրող եւ մեզի ժամանակակից մարդոց, որոնց հանդէպ երախտապարտ ըլլալու ենք միշտ եւ ամէն ատեն:

Գոհաբանութեան Օրը նաեւ առիթ մըն է մեզի յիշեցնելու թէ՛ ի տես մեր վայելած անթիւ եւ անհամար օրհնութիւններուն՝ մենք ալ մեր հերթին կրնանք փոքր կամ մեծ ծառայութիւններ մատուցանելով՝ մեր երախտագիտութիւնը յայտնել թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց:

Տարեկից Երկու Մտաւորականներու

Շարունակուած էջ 13-էն

Ազատեանի գուսպ եւ բնորոշիչ գրութիւնները դաստիարակ եւ խմբագրապետ, վարժարաններու Տնօրէն Պր. Ժիրայր Դանիէլեանի մասին, եւ վիզէն Աղղարեանի շատ յարգալից եւ դաստիարակիչ ընծայականը առաջնակարգ մատենագէտին վերաբերմամբ:

Մեր այս համառօտ յարգանքի արտայայտութիւնը ոչ մէկուն եւ ոչ միւսին կը հասնի արդարեւ: Պարգապէս տողատակ մըն է որ կ'աւելցնենք:

Եկաւ ու հասաւ մակագրուած օրինակ մը Մարգարէտ Մարկոսեանի «Քաղաքներու Կախարդանքը» Ա մաս: Հայ կեանքի իրականութիւնը ճշդող եւ ճշող հիւանդութիւնները կանխատեսող Մարգարէտ կը գրէ երգիծական ամենաջերմ ոճով տալով դարման մը եղածին ու վերիպածին մասին Պոստոնի իր տան մէջ: Բարեկամներ կը հաւաքուին ու հաստատ եւ կամ թափանցիկ, երբեմն թափփած կերպով գիրար կը հասկնան, այսինքն չեն հասկնար, կը խճճեն գիրար տալու համար եզրափակիչ «որոշումներ» միշտ հայեացքին ներքեւ գրքի հեղինակին՝ Դոկտոր Մարգարէտ Մարկոսեանի:

«Ձախող Ձեռնարկ» կոչուած գլուխը բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի այցելութեան առիթով հիւրասիրութեան ընթացքին կը պատահէր, առաջին ակհարկով բնականաբար իբր այդպիսին կ'ընկալէ ընթերցողը մինչեւ այնտեղ ուր ամէն ինչ կարգին

եղած, կոկիկ յայտագրի աւարտին, կին մը կը բողբէ թէ «ձեռնարկը ձախող էր» որովհետեւ իր տղուն յայտագրին մէջ արտասանելու բաժին չէր տրուած: Ահա Մարգարէտին իրական պատմութեան մին, աչքին առջեւ պատահած կենդանի երգիծանք: Նման դիպուածներ շատ են հատորին մէջ երբեմն շատ թափանցիկ նոյնիսկ:

Պր. Դանիէլեան ձեռնարկած է թերթերու խմբագրութեանց «Շիրակ» եւ ապա «Կամար» պարբերաթերթերու: Ստանձնած է դժուարին եւ պատասխանատու տնօրէնի պաշտօնը միացեալ երկու Յովակիմեան-Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարաններուն, յաջորդելով մեր օրերու Պր. Արա Թօփեանի անհաւասարելի տնօրէնութեան: Դանիէլեան պատուաւոր կերպով կատարեց ուսուցչապետի իր պարտքը, մինչեւ իսկ Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հասցնելով իր մատենագիտական մեծ վաստակը: Դժբախտաբար յանկարծական վնաս կրեց եւ աչքերուն լոյսը կորսնցուց Պէյրութի ահեղ պայթուածին հետեւանքով եւ Պոսթոն փոխադրուելով դարմանումի ենթարկուեցաւ: Սակայն ափսոս հոյակապ հայասէր եւ հայագէտ Ժիրայր կեանքէ հեռացաւ:

Բոլորիս համար այս երկու մեծանուն եւ սակայն ամենախոնարհ հայորդիներուն կորուստը համազգային է անտարակոյս: Կաղօթենք իրենց հանգիստին համար ընդ հովանեաւ ամենագութ Տիրոջ արքայութեան երկնային լոյսերուն:

Եւրո-2024. Հայաստանի Կորսնցուց Յաղթանակի Առիթը՝ Կալէսի Դէմ



Ֆուտպոլի Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի նախավերջին հանգրուանին Հայաստանի հաւաքականը Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին վրայ ընդունեց Կալէսի (Ուեյր) հաւաքականին եւ յաղթանակի հասնելու առիթը կորսնցուց արձանագրեց յաւասար՝ 1:1 արդիւնք:

5-րդ վայրկեանին աչքի ինկաւ Սէուտեան «Ալ Ֆաթէհի» կիսապաշտպան Լուկաս Սելարայեանը առաջ մղեց Հայաստանի հաւաքականին:

Առաջին խաղակէսի աւելացուած երկրորդ վայրկեանին անկիւնայինէն յետոյ գոլիի հարուածով սեփական բերդը գրաւեց Հայաստանի հաւաքականի եւ Մոսկուայի «Լոքոմոթիվի» պաշտպան Նալիր Թիկիդեանը:

Հայաստանի հաւաքականը 19 կողային հնարաւորութիւն ստեղծեց, սակայն բերդին կատարեց 2 հարուած:

Երկրորդ խաղակէսին Հայաստանի հաւաքականի աւագ, պաշտպան Վարազդատ Հարոյեանը 5-րդ դեղին քարտը ստացաւ եւ Եւրո-2024-ի ընտրական վերջին խաղին՝ Խրուսթիայի խումբի դէմ պիտի չի կրնայ մասնակցիլ:

Խումբակի առաջատարը Թուրքիայի խումբն է, որը 7 խաղի ընթացքին վաստակած է 16 կէտ եւ նուաճած է եզրափակիչ փուլի ուղեգիրը:

Սպանիան Յաղթեց Վրաստանին, Փորթուկալիան՝ Իսլանտիային

Եւրո-2024-ի ընտրական մրցաշարին վերջին հանգրուանի հանդիպումները կատարեցին Ա եւ Ե խմբերուն մէջ ընդգրկուած խումբերը: Վերջին հանգրուանը մրցաշարային աղիւսակի տեսանկիւնէն մարզական նշանակութիւն չունէր այս խումբերուն համար:

Սպանիոյ հաւաքականը 3:1 արդիւնքով յաղթեց Վրաստանին, Սկովտիան ու Նորվեգիան խաղցան հաւասար՝ 3:3:

Ա խումբէն ուղեգիրները նուաճած են Սպանիան ու Սկովտիան:

Ե խումբին մէջ ֆորթուկալիան 10-րդ յաղթանակը արձանագրեց՝ 2:0 արդիւնքով առաւելութեան հասնելով Իսլանտիայի նկատմամբ:

Պոնտիա եւ Հերցեգովինան 1:2 պարտուեցաւ Սլովաքիային:

Ե խումբէն եզրափակիչ փուլի ուղեգիրները նուաճած են Փորթուկալիան ու Սլովաքիան:



Սերպիան Նուաճեց Եզրափակիչ Փուլի Ուղեգիր

Ֆուտպոլի Սերպիայի հաւաքականը նուաճեց Եւրո-2024-ի եզրափակիչ փուլի ուղեգիրը: Ընտրական մրցաշարի վերջին հանգրուանին սերպերը 2:2 արդիւնքով հաւասարութեամբ աւարտեցին հանդիպումը պոլիարացիներու հետ եւ Ե խումբէն 14 կէտով գրաւեցին երկրորդ տեղը:

Երրորդ տեղը գտնուող Մոնթենեգրոն 1:3 արդիւնքով պարտուեցաւ հունկարացիներէն, որոնք նախորդ հանգրուանին նուաճած էին ուղեգիրը:

Հոլանտան, Ռումանիան Եւ Զուիցերիան Հասան Եզրափակիչ Փուլ

Ֆուտպոլի Հոլանտայի, Ռումանիայի եւ Զուիցերիայի հաւաքականները նուաճեցին Եւրո-2024-ի եզրափակիչ փուլի ուղեգիրները:

Ընտրական մրցաշարի նախավերջին հանգրուանին Հոլանտայի հաւաքականը 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց իտալացիներուն եւ Ե խումբին մէջ 15 կէտով ապահովեց երկրորդ տեղը:

Ի խումբին մէջ Ռումանիայի հաւաքականը 2:1 արդիւնքով պարտութեան մատնեց իսրայէլցիներուն եւ 19 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

Զուիցերիան 1:1 արդիւնքով հաւասար խաղցաւ Քոսովոյի հետ եւ 17 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ: Երրորդ տեղը գտնուող Իսրայէլը ետ է 5 կէտ:

Ալեքսանտրա Գրիգորեանը Եւ Գոռ Սահակեանը Երիտասարդական Աշխարհի Ախոյեաններ



Հայաստանի ներկայացուցիչ Ալեքսանտրա Գրիգորեանը նուաճեց ծանրամարտի աշխարհի երիտասարդական (մինչեւ 20 տարեկան) առաջնութեան ախոյեանի տիտղոսը:

Մեքսիքոյի Կուաուալախարա քաղաքին մէջ տեղի ունեցող առաջնութեան 55 քկ ծանրութեան մէջ Ալեքսանտրա Գրիգորեանը երկամարտին հաւաքեց 188 քկ (81+107):

Ալեքսանտրա Գրիգորեանը նաեւ փոքր ոսկէ մետալ նուաճեց հրում վարժութեան մէջ:

67 քկ ծանրութեան մէջ Գոռ Սահակեանը երկամարտի 305 քկ արդիւնքով նուաճեց ոսկի մետալ:

Մ-22 Եւ Ռուսլան Ասլիկեանը Նուաճեց Ոսկէ Մետալ

Մոնթենեգրոյի Պուտուա քաղաքին մէջ կատարուող բունցքամարտի Եւրոպայի մինչեւ 22 տարեկաններու առաջնութեան Հայաստանի ներկայացուցիչ Ռուսլան Ասլիկեանը նուաճեց ախոյեանի տիտղոսը:

57 քկ ծանրութեան կարգի եզրափակիչին Ռուսլան Ասլիկեանը 4:1 արդիւնքով պարտութեան մատնեց ատրպէյճանցի Ագրակ Պապիրովին:

51 քկ ծանրութեան մէջ Ռուստոլֆ Գարբոյեանը եզրափակիչին պարտուեցաւ ատրպէյճանցի Նիշլաթ Հուսէյնովին եւ բաւարարուեցաւ արծաթէ մետալով:

Կանանց 60 քկ ծանրութեան կարգին ոսկի մետալ նուաճեց էլիդա Քոչարեանը:

Սոնա Յարութիւնեանը (63 քկ), էրիկ Իսրայէլեանը (60 քկ) եւ Ռաֆայէլ Յովհաննիսեանը (86 քկ) բաւարարուած էին պրոնզէ մետալներով:



ԱԱ-2026. Արժանթինի Եւ Պրագիլի Պարտութիւնները

Աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականը առաջին պարտութիւնը կրեց 2026թ. աշխարհի առաջնութեան ընտրական մրցաշարին:

Լիոնել Սկալոնիի գլխաւորած խումբը Պուէնոս Այրեսի մէջ 5-րդ հանգրուանի խաղին ընդունեց Ուրուկուէյի խումբին, որ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Արժանթինի հաւաքականի աւագ Լիոնել Մեսին մասնակցեցաւ ամբողջ հանդիպումին:

Արժանթին 12 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Ուրուկուէյը 10 կէտով երկրորդն է:

Երկրորդ պարտութիւնը կրեց Պրագիլի հաւաքականը, որ հիւրընկալուեցաւ Գոլոմպիային:

Սփապէն Գերագանցած Է Մեսիի, Ռոնալտուի Եւ Նեյմարի Մրցանիշները

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի եւ աշխարհի փոխախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող Կիլիան Մփապէն Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի նախավերջին հանգրուանին Զիլպրալթարին դէմ նշանակած երեք կոլերուն շնորհիւ իր մարզական կեանքին մէջ կոլերու քանակը հասցուցած է 300-ի:

Ան այդ ցուցանիշին հասած է 24 տարեկանին՝ զերգանցելով արժենթինացի Լիոնել Մեսիի, փորթուկալացի Կրիշտիանու Ռոնալտուի եւ պրագիլցի Նեյմարի անձնական տարիքային մրցանիշները: Անոնք 300 կոլին հասած էին 25 տարեկան դառնալէ յետոյ: